Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8
3

01 MAR 2010

№ 12 «Յառաջ»ի գրադարան № 12

73

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ

ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

A. Bedikian

12 կ. 6-որդ. — հատը

1906
ԹԻՖԼԻՍ

342.8
Ա-13

№ 12 Գրադարան «Յառաջի»-ի № 12

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ

ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1906
ԹԻՖԼԻՍ

35.610

ՄՄ-.01.2013

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մաղաքեան փող.
1906

ԲՈՒԴԱՐԱՆ
(183)

1312-91

(116-90) (326-59)

I. ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

A. Bedikian

Ընտրողական իրաւունքը անծանօթ գաղափար չէ հայկական կեանքում։ Թէ անցեալում և թէ ներկայում մեր հասարակական-համայնական հաստատութիւնները ղեկավարուել են, գոնէ որոշ չափով, այդ սկզբունքով։ Սակայն մեր կեանքում չէ եղել և ոչ մի շրջան, երբ հանրութեան միտքը այնչափ զբաղուած լինէր այս առաջնակարգ հարցով, որչափ այժմ։ Այն հանգամանքը, որ Ռուսաստանը մեր օրերում թեւակոխում է—հակառակ արիւնոտ ռէակցիայի—դէպի մի նոր կեանք, որի հիմքը պիտի կազմէ դեմոկրատիզմը (ռամկավարութիւնը, ժողովրդապետութիւնը), ուստի և հասկանալի է դառնում այն տենդային հետաքրքրութիւնը, անդուլ մրցումը, որ գոյութիւն ունի այդ հարցի շուրջը։

Եւրոպական ժողովուրդները վաղուց արդէն ոտք են դրել դեմոկրատիզմի ուղիի վրայ. նրանք այժմ զբաղուած են միայն վերջնականապէս հարթելով այդ ուղին։ 19-րդ դարը իրաւամբ կարող է կոչուել պետական հասարակական կեանքի ռամկավարացման դար, որն իբրև կատարողեց նրան «լուսաւորութեան» (18-րդ) դարը, մասնաւորապէս նրա թագն ու պսակը՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը։

Հակառակ ամեն տեսակ խաւար ոյժերի՝ դեմոկրատիզմի գաղափարը նաև Ռուսաստանում գրաւել է արդէն ամուր հող։ Այդ յաղթական առաջխաղացութիւնից

ոսկում են բոլոր հակաժողովրդական տարրերը։ Պոբեդոնոսցևը, Ռուսաստանի սև հոգին, ինչպէս սո-
լոր են նրան կոչել Եւրոպայում, այն կարծիքն է յայտ-
ում ռամկավարութեան մասին, թէ նա «մեր ժամանա-
ի ամենամեծ խաբեբայութիւնն է»։ Միանգամայն հա-
առակ կարծիքի են եղել և են ժողովրդի իսկական
արեկամները, որոնց բոլորի կարծիքը կարելի է ամ-
ոփել անգլիացի յայտնի տնտեսագէտ և հասարակա-
էտ Ջոն Ստիւարտ Միլլի հետևեալ խօսքի մէջ. «Կա-
ավարութեան լաւագոյն եղանակը ռամկավարութիւ-
ն է»։

Սակայն նախ տեսնենք, թէ ինչ է դեմոկրատիզմը։
ոյս խօսքի տակ պիտի հասկանալ այն սկզբունքը,
ի համաձայն պետական-հասարակական կեանքում
ոյութիւն ունեցող ամեն մի օրէնսդրութիւն, իշ-
անութիւն կամ կառավարութիւն պիտի բղխէ ժո-
ովրդից, հասարակութեան կամքի մէջ պիտի ու-
ենայ այդ իշխանութիւնը իւր հիմքը։ Ուրիշ խօսքով՝
ն տէրութեան ազգաբնակութիւն կամ հասարակու-
իւն ինքն է իրեն կառավարողը և ոչ ուրիշ մէկը կամ
ատերը։ Այդ են պահանջում թէ արդարութիւնը և թէ
ն ժողովրդի շահերը։

Իսկ ինչպէս կարող է մի ժողովուրդ ինքն իրեն
առավարել. չէ՞ որ շատ բարդ գործ է ժողովրդի կա-
ավարութիւնը։ Հին պատմութիւնն ուսումնասիրելով՝
նք տեսնում ենք հետևեալը։ Հին Յունաստանի զա-
ազան քաղաքներ (օր. Աթէնք, Սպարտա) իրենց շըր-
ջականներով կազմում էին առանձին և անկախ պետու-
թիւններ,—քաղաք-պետութիւններ։ Երբ հարկաւոր էր
նում օր. Աթէնքի համար մի օրէնք հրատարակել կամ

պատերազմ յայտարարել՝ հաւաքւում էր ժողովուրդը
մի տեղ և վճիռ կայացնում. ուրեմն՝ ժողովուրդն ան-
միջապէս կառավարում էր ինքն իրեն. այնտեղ գոյու-
թիւն ունէր անմիջական ժողովրդապետութիւն։ Այսպի-
սի կառավարութեան եղանակ գոյութիւն ունէր նաև
միջին դարում Ռուսաստանի մի քանի իշխանութիւն-
ներում, օր. Նովգորոդում, Պսկովում։ Երբ հարկաւոր
էր լինում խորհել պետական կարևոր հարցերի մասին՝
իշխանութեան սահմաններում ապրող արական սեռի
բոլոր չափահաս մարդիկ հաւաքւում էին քաղաքի հրա-
պարակ. այդպիսի ժողովները միջնադարեան Ռուսիա-
յում վեչէ (вѣче) անունն էին կրում։

Անմիջական ժողովրդապետութիւն գոյութիւն ու-
նի ներկայումս միայն Շուէյցարիայի մի քանի մանրիկ՝
այսպէս կոչուած ազգային ժողովների կանտոններում
(Landsgemeindekanton)։ Շնորհիւ այդ կանտոնների փոքր
տարածութեան և սակաւաթիւ, գլխաւորապէս գիւղա-
ցիական, ազգաբնակութեան—նրանցից ամենաբազմա-
մարդը հազիւ 60,000 բնակիչ ունի,—հնարաւոր է եղել
մինչև մեր օրերը պահել այդ երկրներում անմիջական
ժողովրդապետութիւնը։ Ազգային ժողովը (Landsgemeinde)
գումարւում է տարուայ մի որոշ ժամանակ, որն և
միաժամանակ ազգային տօնախմբութեան բնաւորու-
թիւն է կրում. բաց երկնքի տակ մշակւում և հրատա-
րակւում են օրէնքներ, անւում են անհրաժեշտ կար-
գադրութիւններ, ուր և ընտրւում են այն սակաւաթիւ
պաշտօնեաները, որոնք անհրաժեշտ են համարւում ըն-
թացիկ գործերը կառավարելու համար,—գիւղապետ-
ներ, դատաւորներ, գանձապահներ և այլն։

Վերոյիշեալ օրինակները ցոյց են տալիս, որ

անմիջական ժողովրդապետութիւնը հնարաւոր է պահպանել միայն չափազանց մանր և սակաւաթիւ ազգաբնակութիւն ունեցող երկրներում։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ մեր ժամանակի սովորական պետութիւններ անկարող են ղեկավարուել յիշած սկզբունքով։ Ոչ մի հնարաւորութիւն չի լինի օր. Բուլղարիայի, Յունաստանի—էլ չեմ ասում Գերմանիայի կամ Ռուսիայի—ամբողջ իրաւատէր ազգաբնակութիւնը ամեն տարի, թէկուզ կարճ ժամանակով, մի տեղ հաւաքել և օրէնքներ մշակել ու հրատարակել։

Նոր ժամանակները մշակել և գործադրութեան մէջ են մտցրել ժողովրդապետութեան մի ուրիշ եղանակը, ոչ անմիջական, այլ միջնորդական կամ ներկայացուցչական ժողովրդապետութիւնը։ Վերջինիս էութիւնը կայանում է հետևեալում։ Քանի որ անհնար է, նոյնիսկ յաճախ ցանկալի չէ, մի երկրում մտցնել անմիջական ժողովրդապետութիւն, ուստի և ժողովուրդն իր ազատ կամքով ընտրում է իր միջից արժանաւոր և վստահելի անձնաւորութիւններ, որոնք և, ազգաբնակութեան որոշ մասի ներկայացուցիչը լինելով, ժողովւում են և միասին խորհրդակցելով հրատարակում են օրէնքներ ու կառավարում երկիրը։

Իսկ այն իրաւունքը, որով մի պետութեան քաղաքացի կամ մի համայնքի անդամ իրաւունք է ստանում պետական-հասարակական գործերը վարող հաստատութիւնների ընտրութիւններին մասնակցելու, կոչւում է ընտրողական իրաւունք. ընտրելու իրաւունքը կոչւում է ակտիւ ընտրողական իրաւունք, իսկ ընտրուելու իրաւունքը՝ պասսիւ ընտրողական իրաւունք։

Անտարակոյս պետական կեանքի էւոլիւցիան անմիջական ժողովրդապետութիւնից մի ոստիւնով չէ թեւակոխել ժամանակակից ներկայացուցչական ժողովրդապետութիւնը։ Շէյցարիայում, օրինակ, մեր օրերումն էր գոյութիւն ունի ժողովրդապետութեան մի եղանակ, որ միջին տեղն է բռնում վերոյիշեալ երկուսի մէջ։ Խօսքս ռեֆերենդումի մասին է, որի էութիւնը հետևեալն է։ Երբ հարկաւոր է լինում երկրի համար մի օրէնք հրատարակել՝ այդ օրէնքը մշակւում է ժողովրդից ընտրուած ներկայացուցչական ժողովում. այնտեղ քննուելուց յետոյ օրինագիծը յանձնւում է առանձին-առանձին համայնքներին ի ձայնաւորութիւն։ Եթէ ժողովրդի մեծամասնութիւնը օրինագծին հաւանութիւն տայ՝ նա կընդունուի և կդառնայ հաստատուն օրէնք, իսկ եթէ ոչ՝ կմերժուի բոլորովին։ Ուրեմն, յամենայն դէպս, օրինագծի վերջնականապէս վճռող ինստանցիան, իսկական օրէնստուն ոչ թէ ժողովրդական ներկայացուցիչներն են, այլ ժողովուրդը ինքը։ Երկու տեսակ ռեֆերենդում կայ—1. պարտադիր՝ ամեն մի քննուող օրինագծի համար, 2. Ոչ-պարտադիր (ֆակուլտատիւ), երբ ռեֆերենդումի են դիմում որոշ թուով քաղաքացիներ։

Ռեֆերենդումի հետ կապուած է մի քանի կանոններում ինիցիատիւի իրաւունքը. այսինքն՝ որոշ թիւ կազմող քաղաքացիներ իրաւունք ունեն ներկայացուցչական ժողովի քննութեան առարկայ դարձնել իրենց կողմից առաջարկուած օրինագծեր։

Եւրոպական միւս երկրներում խպառ վերացել է անմիջական ժողովրդապետութիւնը։ Ժողովրդական ներկայացուցիչների ձեռքին է օրէնսդրական իրաւունքը։ Նոյնիսկ երկրի սահմանադրութիւնը փոփոխելիս դիմում

չէ լինում անմիջապէս իրեն ժողովրդին։ Ուրիշ խօսքով՝ ժողովրդապետութիւնը ժամանակակից սահմանադրական և պարլամենտական պետութիւններում ընտրել է կողմնակի ճանապարհ՝ ընտրուած ներկայացուցիչների միջոցով։

Սովորական կեանքում էլ շատ է պատահում, որ որոշ, սահմանափակ թուով մարդիկ, երբ անհնար կամ անկարելի է լինում համախմբուել և իրենց բոլորին հետաքրքրող հարցերի մասին խորհրդակցել, նրանք ընտրում են իրենց միջից ներկայացուցիչներ, որոնք և միասին խորհրդակցելով տնօրինում են բոլորին վերաբերող գործերը. այսպէս է լինում օր. ակցիոներական, արհեստակցական և այլ ընկերութիւններում։ Այսպէս է լինում նաև հասարակական գործերում՝ օր. քաղաքային ինքնավարութեան ձայնաւորների ընտրութիւնը և այլն։ Եւ եթէ մենք կարևոր նշանակութիւն ենք տալիս վերոյիշեալ, մասնաւոր և սահմանափակ թուով մարդկանց վերաբերող ընտրութիւններին, որչափ աւելի աշխարհի վերաբերմունք պիտի ցոյց տանք դէպի համապետական ընտրութիւնները, որոնցից է կախուած ամբողջ պետութեան վիճակը։

Սահմանադրական երկրներում, համապետական գործերի համար, ուրեմն, գոյութիւն ունի ընտրողական իրաւունք։ Այն քաղաքացին, որ իրաւունք ունի վերոյիշեալ նպատակով մասնակցելու ընտրութիւններին, կոչւում է ընտրող (избиратель), իսկ ընտրուածը՝ երեսփոխ, ներկայացուցիչ կամ պատգամաւոր (դեպուտատ)։ Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը, որ կանչւում է մի քանի (4—5) տարով և ուր քննւում և մշակւում են ամբողջ երկրին վերաբերող օրէնքներ, զանազան երկրներում զանազան անուն է կրում.— parlamentis, ռայխստագ, դեպուտատների պալատ, ազգային խորհուրդ, և այլն։ Ռուսիայում էլ նոյն նպատակով գոյութիւն ունի մի կիսատ-պռատ ներկայացուցչութիւն՝ պետական դումայ անունով։

Ո՞րն է ամեն մի ժողովրդական ներկայացուցչութեան գլխաւոր ֆունկցիան։

Բոլոր սահմանադրական երկրներում իշխանութիւնը բաժանւում է երեք կարգի—օրէնսդրական, գործադիր և դատաստանական։ Կարևորագոյնը նրանց մէջ օրէնսդրական իշխանութիւնն է, նա է հրատարակում ամբողջ երկրի համար պարտադիր օրէնքներ և, այդպիսով, նրա ձեռքին է երկրի վիճակի տնօրէնութիւնը։ Այդ իշխանութիւնն է, որ գտնւում է ժողովրդական ներկայացուցիչների ժողովի՝ պարլամենտի ձեռքում։ Ի հարկէ, այդ իրաւասութիւնը լինում է սահմանափակ կամ լայն, նայած թէ մի սահմանադրական երկրում որչափ զարգացած է դարձել ժողովրդապետութիւնը։ Ըստ այսմ էլ՝ ուր գոյութիւն ունի իսկական ժողովրդապետութիւն, բուն բարլամենտարիզմ (հասարակապետութիւններում), օրէնսդրական և միւս իշխանութիւնները, բարձրագոյն իշխանութիւնն անբաժան գտնւում են ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ձեռքում. իսկ ուր իշխում են սոսկ սահմանադրական կարգեր (սահմանադրական միապետութիւն), այնտեղ բարձրագոյն իշխանութիւնը բաժանւում է. նա մասամբ գտնւում է ժողովրդի, մասամբ էլ է միապետի ձեռքում. նրանք երկուսը միասին միայն կազմում են պետութեան բարձր իշխանութիւն, իսկ միւս՝ գործադիր և դատաստանական իշխանութիւնը՝ արդէն իսկ նոյն միապետի գործակալ-

ների արտօնութիւնն է լինում։ Իսկ ինքնակալ միապետական երկրներում ամբողջ բարձրագոյն իշխանութիւնը գտնւում է միապետի ձեռքում։

Յամենայն դէպս ակներև է ժողովրդական ներկայացուցիչների ժողովի՝ պարլամենտի ունեցած ահագին նշանակութիւնը մի երկրի համար։ Ժողովրդի համար կենսական հարց է, թէ ինչ մարդկանցից է բաղկացած պարլամենտը, որը սահմանում է, թէ ինչ իրաւունքներ և պարտականութիւններ ունեն պետութեան քաղաքացիները կամ դասակարգերը, թէ ինչ տեսակ հարկեր են սահմանւում և ինչպէս են գործադրւում ժողովրդից հաւաքած փողերը, և թէ ինչ իրաւունքներ և պարտականութիւններ պիտի ունենան երկիրը կառավարող ատիճանաւորները, և այլն։ Ուստի և, բնականաբար, ամեն մի քաղաքացի պարտաւոր է իմանալ և գիտակցել, թէ ինչպէս են ընտրւում ժողովրդական ներկայացուցիչները, թէ արդեօք գոյութիւն ունեցող ընտրողական կարգերը ապահովում են ամբող ժողովրդի, թէ՞ որոշ դասակարգերի շահերը, ինչպէս պիտի ընտրել, որի հետևանքը լինի ամբողջ ժողովրդի, ամենից առաջ աշխատաւոր դասակարգերի շահերի պաշտպանութիւնը։

Ահա այս հարցերին կուզէինք տալ պատասխաններ։

II. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բաւական չէ, որ թղթի վրայ գոյութիւն ունենան թէկուզ ամենալաւ օրէնքներ, ամենադեմոկրատիկ ընտ-

րողական իրաւունք. հարկաւոր է, որ այդ բոլորը նաև գործադրուի կեանքի մէջ։

Յայտնի է, որ այժմեան Թիւրքիան նոյնիսկ ունի մի գրաւոր սահմանադրութիւն, որը, սակայն, մնում է մեռած տառ երկրի համար. այնտեղ իրապէս իշխում է ամենադաժան բռնապետութիւնը։ Յայտնի է նմանապէս, որ անցեալ հոկտ. 17-ի մանիֆեստով խոստացուեցին Ռուսաստանի համայն ազգաբնակութեան մի շարք քաղաքական ազատութիւններ. մի, թէն թերի, սահմանադրութիւն. սակայն իրականութիւնը մեզ այլ բան է ցոյց տալիս. երկիրը դեռ հեծում է սպանիչ ճիրանների մէջ։

Ուրեմն՝ բաւական չէ որ օրէնքով սահմանուի թէկուզ ամենադեմոկրատիկ՝ քառանդամ ընտրողական իրաւունք, ինչպիսի և պահանջում են բոլոր պրոգրեսիստական կուսակցութիւնները. հարկաւոր է, որ ժողովրդին, ընտրողներին, հնարաւորութիւն տրուի օգտուելու այդ իրաւունքներով. մի խօսքով՝ հարկաւոր է ստեղծել այնպիսի նախընտրական պայմաններ, որոնք ապահովեն սահմանուած ընտրութիւնները։

Ամեն մի ազատ ընտրութիւն կատարելու համար անհրաժեշտ է, որ երկրում իշխէ կատարեալ ազատութիւն՝ խօսքի, մամուլի եւ ժողովումների ազատութիւն, նաև՝ անձի եւ բնակարանի անձեռնմխելիութիւն։

Երբ մէկին իրաւունք է տրւում ընտրելու կամ ընտրուելու, այդ դէպքում, բնականաբար, անհրաժեշտ է, որ գոյութիւն ունենան վերոյշեալ ազատութիւնները։ Հարկաւոր է, որ մարդիկ իրենց քաղաքական-հասարակական հայեացքները ազատ կերպով արտայայտեն թէ գրաւոր և թէ բանաւոր կերպով ուր և կամենան։ Ուր

չկան նախընտրական այս անհրաժեշտ պայմանները, այնտեղ կատարուած ընտրութիւններն էլ չեն լինիլ արտայայտութիւն ժողովրդական կամքի։

«Մարդս հասարակական կենդանի է», ասել է դեռ շատ դարեր առաջ յայտնի յոյն փիլիսոփայ Արիստոտելը։ Այդ խօսքով նա յայտնել է այն ակնյայտ ճշմարտութիւնը, թէ մարդ իբրև այդպիսին անբաժան է հասարակութիւնից, նրանից է ստանում իւր մտաւոր և բարոյական կարողութիւնը, և փոխադարձաբար՝ նրանից էլ օգտւում է հասարակութիւնը։ Երբ մէկը ունի մի քաղաքական համոզմունք՝ նա պէտք ունի անհրաժեշտօրէն քարոզելու, տարածելու այդ համոզմունքը. իսկ այդ կարելի է միայն, ամենից առաջ, խօսքի, մամուլի և ժողովումների միջոցով։ Հարկաւոր է, որ մարդկանց միտքը չկաշկանդեն զանազան ոստիկանական և ցենզորական շղթաներով, պէտք է ամենքին ազատ թողնել գրելու և քարոզելու իր մտքերը։

Հոկտեմբերեան մանիֆեստը խոստանում էր այդ ազատութիւնները. խոստումը գործ չդարձաւ. բոլորիս յայտնի է, որ այդ մանիֆեստից յետոյ աւելի ևս իր թևերը տարածեց համայն Ռուսիայի վրայ արիւնոտ, խաւար բռնակալութիւնը։

Ու այդ պայմանների մէջ երկրում կատարուեցին Պետական Դումայի ընտրութիւնները։

Թոյլ չէին տրւում և դեռ թոյլ չեն տրւում ժողովումներ, ուր ամեն տեսակ քաղաքական համոզմունքի տէր մարդիկ խօսեն բացատրեն իրենց ծրագիրները։ Հէնց որ մի քանի մարդիկ հաւաքւում են միասին, իսկոյն ցրւում են նրանց սուինների ոյժով։ Չկայ նաև մամուլի ազատութիւն։ Հէնց որ մի օրգան խիստ քննադատում է ներկայ կառավարութիւնը՝ իսկոյն լռեցնում են նրան, փակում են լրագիրները, դեռ շատ անգամ խմբագրին էլ աքսորում են։

Ներկայումս ամեն օր սունկի նման բուսնող և մի երկու օրում փակուող թերթերը ապացոյց չեն այս անհրաժեշտ ազատութիւնների բացակայութեան։

Կառավարութիւնը, զրկելով ազգաբնակութիւնը անհրաժեշտ համարուող նախընտրական պայմաններից՝ խօսքի, մամուլի և այլ ազատութիւններից՝ նպատակ ունէր զրկել այդ ընտրութիւնները ժողովրդական ոգուց, դարձնել նրանց մի նոր ստոր գործիք բիւրոկրատիայի ձեռքին։ Եւ նա մասամբ հասաւ իր նպատակին։ Ցրուած Դուման ոչ միայն իր ոչ—դեմոկրատիկ ընտրութեամբ, այլ նաև նախընտրական անհրաժեշտ պայմանների բացակայութեամբ, չէր արտայայտում ժողովրդի կամքը։

Ապա՝ հարկաւոր է նաև անձի և բնակարանի անձեռնմխելութիւն։ Սովորական բան է եղել և է դեռ, որ մեզնում առանց որևէ հիմնաւոր պատճառի, նոյնիսկ կէս գիշերին, մտնեն մէկի բնակարանը և խուզարկեն թէ բնակարանը և թէ բնակիչներին։ Ուրիշ խօսքով՝ ժանդարմերիան կամ ոստիկանութիւնը ազատ են ձեռնամուխ լինելու մեր անձին և մեր բնակարանին. բաւական է, որ մէկը «անվստահելի» կամ «անբարեյոյս» ճանաչուած լինի ադմինիստրացիայի կողմից։

Այդպիսի անվստահութիւն կարտայայտուի մանաւանդ ընտրութիւնների ժամանակ դէպի այնպիսի մարդիկ, որոնք իրենց քաղաքական-հասարակական համոզմունքներով հակառակորդ են հանդիսանում ներկայ կառավարութեանը. և նրանք ենթակայ են լինում հալածանքի։

Ուրեմն՝ անհրաժեշտ նախընտրական պայման է նաև անձի և բնակարանի անձեռնմխելիությունը, առանց որի անկարելի է ազատ պրոպագանդայ։

Վերոյիշեալ նախընտրական պայմանները այն ընդհանուր գիծն ունեն, որ նրանք դուրս են ընտրողների անմիջական իրաւասութիւնից, նրանք սահմանւում են օրէնքով։

Բայց կան նաև մի շարք ուրիշ պայմաններ, որոնք կախուած են արդէն ընտրողների կամքից. պայմանով՝ որ երկրում իշխեն վերոյիշեալ անհրաժեշտ համարուած ազատութիւնները։

Ասենք թէ երկրում գոյութիւն ունեն խօսքի, մամուլի և ժողովուրդների ազատութիւն։ Այս բոլորը դեռ բաւական չէ, որ կատարուելիք ընտրութիւնները լինեն դեմոկրատիկ։

Չէ՞ որ ժողովուրդը, ամբողջովին վերցրած, գիտակից չէ միանգամայն, նա դեռ չգիտէ իր չարն ու բարին, ոչ բոլորը գիտեն, թէ պարլամենտի համար ընտրուող պատգամաւորը ի՞նչպիսի օրէնքներ հրատարակելուն պիտի աջակցէ, որ լինեն ժողովրդի շահերին մօտիկ։

Օրինակ պարլամենտում պիտի որոշեն, թէ ի՞նչպիսի հարկեր պէտք է հաստատել. ամբողջ ազգաբնակութիւնը շահագրգռուած է այդ բանում։ Իսկ այդ հարցը տարբեր մարդիկ տարբեր կերպ են հասկանում։

Հարկաւոր է ուրեմն, որ ընտրութիւնից առաջ հիմնական քաղաքական-սոցիալական հարցերի մասին նոյն կերպ մտածող մարդիկ համախմբուեն, հարկաւոր է, որ այդպիսի համախմբումները առաջնորդուեն իրենց որոշ, սեփական ծրագրով։

Նոյն ընտրողական շրջանում, այդպիսով, առաջ կը

գան մի քանի խմբակներ՝ տարբեր ծրագիրներով։ Այդ խմբակներից իւրաքանչիւրը կաշխատէ, որ ընտրուէ իր թեկնածուն, քանի որ, իւր կարծիքով, նա կարող է ամենալաւ կերպով պաշտպանել իր ընտրող խմբակի հասկացած ճշմարիտ քաղաքական-հասարակական հայեացքները։

Մի տէրութեան սահմաններում նոյն հիմնական քաղաքական-տնտեսական համոզմունքներն ունեցող խմբակները միանալով կազմում են կուսակցութիւններ, իսկ նրանց բոլորին միացնող ընդհանուր ծրագիրը՝ կուսակցութեան ծրագիր, որ ընդունելի պիտի համարուի կուսակցութեան բոլոր անդամների համար։

Արտասահմանում, ուր իշխում են ազատ կարգեր, այդպիսի կուսակցութիւնները հանդիսանում են մի-մի համայնքներ, իրենց որոշ կանոնադրութեամբ. ընկերական սերտ յարաբերութիւններով—մանաւանդ՝ սոցիալիստական կուսակցութիւնները։ Պարլամենտական-քաղաքական կռուից դուրս էլ նրանք պահպանում են իրար հետ ընկերական-կուսակցական կապ. նրանք ունենում են իրենց յատուկ կուսակցական կլուբները, ժողովները, ընկերութիւնները. նրանք ունեն յատուկ կուսակցական գրականութիւն։ Թէ խօսքի և թէ գրի միջոցով ամեն տեղ նրանք տարածում են իրենց կուսակցութեան գաղափարները, որոնցով և ապրում են կուսակցութեան անդամները։

Այդ բոլորից զատ հարկաւոր են նաև մի քանի տեխնիքական յարմարութիւններ։ Ընտրութիւնները կատարւում են այսպէս։ Ամբողջ երկիրը բաժանւում է որոշ թիւ կազմող ընտրողական շրջանների։ Այդ շրջանները կարող են համապատասխանել արդէն գոյութիւն

ունեցող վարչական շրջաններին (նահանգ, գաւառ, քաղաքամաս և այլն), կամ, աւելի լաւ կարող են բոլորովին նոր կազմուել։ Յամենայն դէպս, դեմոկրատիական ընտրութիւնները պահանջում են, որ ընտրողական շրջանները ունենան գոնէ մօտաւորապէս նոյնչափ ազգաբնակութիւն, որպէսզի պարլամենտ գնացող բոլոր պատգամաւորները ներկայացուցիչ լինեն հաւասարաչափ ազգաբնակութեան։

Իւրաքանչիւր ընտրողական շրջանի համար պիտի պատրաստել ընտրողների ցուցակ (списокъ избирателей), որից և իմացուի, թէ այդ շրջանում ով իրաւունք ունի ընտրելու։ Այդ ցուցակները օրեր, նոյնիսկ շաբաթներ առաջ պիտի պատրաստել և յայտարարել կամ կպցնել հրապարակական վայրերում, որպէսզի բոլոր բնակիչները հնարաւորութիւն ունենան ստուգելու այդ ցուցակը։ Ապա հոգս պիտի քաշել, որ ընտրութեան ժամանակ, երբ հրաւէր է ուղարկւում ընտրողներին, այդպիսի հրաւէրներ ստանան բոլոր ընտրողները. չլինի թէ զանազան կուսակցական և այլ միտումներով շատերը զրկուեն ձայնաւորութիւնից։

Այդ անելուց յետոյ ընտրողական շրջանում որև է այժ ներկայացնող ամեն մի կուսակցութիւն յայտարարում է իւր թեկնածուի անունը. յանձնարարում է իւր կուսակիցներին և ամենքին, որ ընտրեն այդ թեկնածուին. պրոպագանդայ ագիտացիայ, է անում, թէ միայն այդ կուսակցութեան ներկայացուցիչը կարող է պաշտպանել ժողովրդի իսկական շահերը,

Ազատ երկրներում իրենք թեկնածուներն էլ պրոպագանդայ են անում, ճանապարհորդում են գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, մեթինգներ են անում, բացատ-

Н16-90 / (326-59) / 13112-91

ռում են իրենց ծրագիրը, պարզում են իրենց ապագայ գործունէութեան եղանակը պարլամենտում։ Մղւում է կատաղի կուսակցական պայքար։ Շատ հետաքրքիր է ընտրողական պայքարը մանաւանդ Անգլիայում։ Ամբողջ երկիրը բռնուած է լինում տենդոտ հետաքրքրութեամբ։ Այնն օր տեղի են ունենում բազմամարդ միտինգներ. ծախսւում են տհագին գումարներ, հանդէս են գալիս կուսակցութիւնները, որը զօրեղ, որը թոյլ։ Աւելի թոյլերը «բլոկ» են կազմում ուժեղ կուսակցութեան դէմ, որպէսզի գոնէ միացեալ ոյժերով, կոմպրոմիսսով, անցկացնեն իրենց ընդհանուր թեկնածուին։

Որպէսզի հասարակութիւնը կարողանայ հետևել ընտրութիւններին, որ նրանք լինեն կանոնաւոր, ընտրւում է սի ընտրողական բիւրոյ (избирательное бюро)։ Այդ բիւրոյի մէջ մտնում են զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներ, որպէսզի հետևեն ընտրութեան կանոնաւորութեանը. ապա թէ ոչ եթէ բանը թողնուելու լիներ չինովնիկներին, դժուար չէ դուշակել, թէ նրանք ինչ կանէին։

Մինչև ընտրութեան օրը ամեն մի ընտրող ստանում է անուանական քարտը, որով իրաւունք է տրւում մէկին ձայն տալու։ Ապա քարտը ընտրողը ներկայացնում է ընտրողական բիւրոյին և տալիս է իւր ձայնը։ Այդ քարտը ուրիշին յանձնելու իրաւունք չկայ, ապա թէ ոչ հարուստների համար դժուար չէր լինի գնել այդպիսի շատ քարտեր և իրենց մարդուն անցկացնել։ Ընտրողական բիւրոն մէկ-մէկ նշանակում է, թէ ովքեր ձայն տուին։

Բուն ընտրութիւնը կատարւում է բիւլետենների (թերթիկների) միջոցով, որոնց վրայ նշանակուած են

ՀԱՅԿԱՆ ԳԻՒՂԱՅԻՆ Библиотека

լինում բոլոր կանդիտատների անունները. ամեն մի կուսակցութիւն կարող է հրատարակել նաև իւր բիւլլետենները՝ իւր կանդիդատների անունով։ Առաջին դէպքում ամեն մի ընտրող ջնջում է բիւլլետենի վրայ նշանակած իւր ոչ—ցանկալի մարդկանց անունները. իսկ երկրորդ դէպքում ընտրողը յանձնում է իւր կուսակցութեան բիւլլետենը ընտրողական բիւրոյին։

Երբ ստացւում են բոլոր բիւլլետենները, որոշեալ ժամից յետոյ վերջ է տրւում բիւլլետեններ ստանալուն, որոնք բոլորն էլ դցւում են դրանց համար յատուկ պատրաստուած արկղի (ուրնայ) մէջ։ Այնուհետև սկսում են հաշուել ձայները։ Ո՛ր կանդիդատը ստացած է լինում ընտրողների թուի կիսից աւելի ձայն, նա համարւում է ընտրուած։ Այն դէպքում, երբ ոչ մէկը ստացած չի լինում այդչափ ձայն, սովորաբար տեղի է ունենում կրկնաքուէարկութիւն. այս անգամ ձայնների համեմատական առաւելութիւն ստացող կանդիդատը համարւում է ընտրուած։

Պէտք է մոռանալ նաև այն, որ ընտրութիւնները կանոնաւոր և նպատակայարմար անելու համար ի նկատի պիտի ունենալ նաև ընտրութեան ժամանակը և տեղը։

Եթէ ընտրութիւնները նշանակուեն շաբաթուայ մէջ, երբ աշխատաւորները զբաղուած են լինում, նրանցից շատ շատերը իրապէս զրկուած կլինեն ընտրելու յարմարութիւնից,—թէկուզ ընտրութիւնները տեւելու լինեն մինչև երեկոյեան ուշ։ Բանուորը չէ կարող թողնել աշխատանքը և երթալ մասնակցելու ընտրութիւններին, այդ դէպքում նա կենթարկուի տուգանքի կամ նոյնիսկ կարձակուի գործից։ Աշխատանքը վերջացնելուց յետոյ էլ, յոգնած ու վաստակած և արնայլն հոգսերով ծանրաբեռնուած, շատերը չեն երթալ ընտրութիւններին։ Հետևանքը այն կլինի, որ կուշտ ու հանգիստ, միշտ ազատ ժամանակ ունեցող արտօնեալ դասակարգերը կմասնակցեն ընտրութեանը, իսկ շատ աշխատաւորներ կզրկուեն դրանից։ Այդ է ցոյց տալիս իրականութիւնը։ Անհրաժեշտ է ուրեմն, որ ընտրութիւնները լինեն կիրակի կամ տօն օրերին։

Անհրաժեշտ է մոռանալ նաև այն մասին, որ ընտրութիւնները կատարուեն յարմարաւոր տեղ, կենտրոնական վայրում։ Եթէ ընտրութեան վայրը հեռու է, այդ դէպքում էլ աշխատաւոր գիւղացին չէ կարող թողնել իւր գործը և տասնեակ վերստեր հեռու գտնուող ընտրութեան տեղը երթալ, ուր նա պիտի ձայն տայ։ Հարուստների, կալուածատէրերի համար դժուար չի լինի կառքով ու ձիով «զբօսանք» կատարել, երթալ ուր պէտք է, իջնել հիւրանոցներում, օրերով նոյնիսկ մնալ, բանեցնել իւր իրաւունքը և ապա վերադառնալ։ Ընտրողներին հարկաւոր է դիւրութիւն տալ, որ նրանք ըստ կարելոյն հեռու երթալու չստիպուեն և կարճ ժամանակուայ ընթացքում կատարեն իրենց պարտականութիւնը։

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Եթէ մի երկրում գոյութիւն ունեն անհրաժեշտ համարուած նախընտրական պայմաններ ժողովրդապետութիւն հաստատելու համար, այդ դէպքում էլ ծա-

գում է մի ուրիշ, ամենակարևոր հարց.—ի՞նչպիսի ընտրություններ են հարկաւոր, որոնք բուն արտայայտիչ լինեն ժողովրդական կամքի, որոնց միջոցով ամբողջ ժողովուրդը, և ոչ նրա այս կամ այն դասակարգը, կարողանայ հանդէս գալ յանձին ժողովրդական ներկայացուցիչների։ Ընթերցողը կիմանայ արդէն, որ բոլոր պրոգրէսսիստ կուսակցութիւնները պահանջում են բոլոր ընտրութիւնները կատարել քառանդամ սիստեմով, այն է՝ իրագործել ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ընտրողական իրաւունքը։ Դրա վրայ պիտի աւելացնել դեմոկրատիական ընտրութիւնների մի ուրիշ, կարևոր կողմը, այն է որ նրանք պիտի լինեն նաև պրոպորցիոնալ (համեմատական)։ Այս բոլորի մասին էլ խօսք պիտի լինի այս գրքոյկում։ Այն ժամանակ միայն ընտրութիւնները կլինեն դեմոկրատիական, երբ նրանք կատարուեն մեր յիշած եղանակով։

Եւրոպական ազատ երկրներում այս կամ այն չափով գործադրւում է ընդհանուր ընտրողական իրաւունքը, շատ տեղ մեծ սահմանափակումներով. կան նաև երկիրներ, ուր ընտրութիւնները կատարւում են այլ կերպ։

Ի՞նչ պիտի հասկանալ, երբ ասում են ընդհանուր ընտրողական իրաւունք։

Այդ նշանակում է, թէ պարլամենտական կամ առհասարակ բոլոր ընտրութիւնների ժամանակ ձայնի իրաւունք պիտի ունենան պետութեան բոլոր չափահաս քաղաքացիները,—տղամարդ թէ կին,—բացառութեամբ, ի հարկէ, խելագարների և դատաստանական ճանապարհով ընտրողական իրաւունքից զրկուածների։

Սակայն իրականութիւնը ցոյց է տալիս, որ համարեա բոլոր երկրներում էլ առաջ են բերում շատ խոչընդոտներ ընդհանուր ընտրութիւնների դէմ։

— 21 —

Այդ խոչընդոտները կամ սահմանափակումները ընդհանուր ընտրողական իրաւունքի դէմ կարելի է բաժանել երկու գլխաւոր կատեգորիաների. 1) ցենզային և 2) ֆիզիոլոգիական սահմանափակումներ։

Շատ երկրներում գոյութիւն ունի ոչ թէ ընդհանուր, այլ դասային (сословное) ներկայացուցչութիւն, որի ժամանակ իշխում է կամ գերիշխում է երկրի ազնուականութիւնը։ Այս դէպքում ուրեմն ընտրելու իրաւունք են ստանում մարդիկ ոչ իբրև հաւասար քաղաքացիներ՝ հաւասար իրաւունքներով և պարտականութիւններով, այլ իբրև որոշ դասի պատկանող անհատներ։ Ասում են, թէ զանազան դասերը՝ ազնուականութիւնը, զիւղացիութիւնը և քաղաքի բնակչութիւնը իբրև առանձին-առանձին կատեգորիաներ ընտրութիւն պիտի կատարեն և իրենց դասի յատուկ պատգամաւորները պիտի ունենան ժողովրդական ներկայացուցչութեան մէջ։

Ընտրութեան այս սիստեմն է եղել գերիշխող անցեալում, այդ սիստեմը գոյութիւն ունի դեռ այժմ էլ մի քանի յետադէմ երկրներում։ Ամեն մի դաս ընտրում է իւր ներկայացուցիչներին և ապա նրանք բոլորը միասին համախմբւում են պարլամենտում։ Երկու դաս միանալով խեղդում են երրորդի ձայնը։

Դասային ներկայացուցչութիւն գոյութիւն ունէր միջնադարեան Ֆրանսիայում մինչև Մեծ Յեղափոխութիւնը. դրանից առաջ հրաւիրուած այսպէս կոչուած «երեսփոխանական ժողովը» (генеральные штаты) դասային բնաւորութիւն ունէր։ Մինչև վերջերս Ֆինլան-

դական սէյմն էլ դասային ներկայացուցչութիւն էր. ազնուականութիւնը, հոգևորականութիւնը, գիւղացիութիւնը և բուրժուազիան ուղարկում էին իրենց առանձին-առանձին ներկայացուցիչներին։ Վերջերս միայն վերացաւ այդ խայտառակ ընտրողական սիստեմը և մտցրուեց ընդհանուր ընտրողական իրաւունք։

Դասային ներկայացուցչութիւն է նաև անգլիական պարլամենտի վերին պալատը։

Դասային սիստեմով են առաջնորդւում նաև Ռուսիայի զեմստվոները։ Զեմստվոյի համար ձայնաւորներ ընտրւում են խոշոր կալուածատէրերի (ազնուականների) կողմից առանձին, գիւղացիների կողմից՝ առանձին, իւրաքանչիւրը որոշ թուով։ Հետևանքն այն է, որ 9523 զեմսկի ձայնաւորներից 5433 հոգի, այսինքն կէսից աւելին, ազնուականութեան ներկայացուցիչներ են *)։ Իսկ ազնուականները մի քանի հարիւր անգամ աւելի քիչ են, քան գիւղացիները։ Ռուսիայի 34 զեմսկի նահանգներում ազնուականների թիւը հասնում է 788 հազարի, իսկ գիւղացիների թիւը՝ 59 միլիոնի։

Դասային ներկայացուցչութիւնից տուժում է աշխատաւոր ժողովուրդը. նրանից շահ ունեն միայն ազնուականները, որոնք համարում են իրենց «ազնիւ արիւն» ունեցողներ, հայրենիքի իսկական պաշտպաններ. ու նրանք արդարացնում են այն հին ֆրանսիական խօսքը, թէ «ազնուականութիւնը պիտի ծառայէ, հոգևորականութիւնը՝ աղօթէ, իսկ մնացած բոլոր դասերը պիտի հարկերը վճարեն»։

*) Ѣ. Т. Сватковъ, Созывъ народныхъ представителей, էջ. 38.

«Պէտք է վերացնել բոլոր դասային խտրութիւնները», կոչում են իսկական դեմոկրատները. բոլոր մարդիկ հաւասար են. ամեն մէկը պէտք է ձայն տայ իբրև քաղաքացի. ընտրութիւնը պիտի լինի ընդհանուր։ Աւելորդ են այլևս դասերը, մանաւանդ որ նրանք արդէն իսկ կորցրել են կամ կորցնելու վրայ են իրենց նախկին ֆունկցիաները։ Սոցիալ-տնտեսական կեանքի մէջ կատարուած փոփոխութիւնները էապէս յեղաշրջել են դասերը։

Դասային ներկայացուցչութեանը մօտ է ցենզային ներկայացուցչութիւնը։

Այս դէպքում գերիշխում են ընտրութիւններին ոչ թէ արտօնեալ ազնուականները, այլ որոշ ցենզ ունեցողները,—լինի կարողութեան ցենզ թէ մտաւոր ցենզ։

Կարողութեան ցենզի վրայ հենուած ընտրութիւնները արդարացնում են նրանով, թէ պետական կեանքի ղեկավարութեան գործում մասնակցութիւն ունենալ չեն կարող ընդհանրապէս բոլորը, այլ նայած թէ ով որ չափով հարկ է տալիս պետութեանը ու այդպիսով դառնում նրա գոյութեան նեցուկներից մէկը։ Ուրեմն՝ ով աւելի հարկ է վճարում պետութեանը՝ աւելի էլ իրաւունք ունի. հարկ չվճարողները իրաւունք չպէտք է ունենան մասնակցելու ընտրութիւններին։

Այնպիսի մի լիբերալ և յայտնի տնտեսագէտ ու հասարակագէտ անձն, ինչպիսին էր անգլիացի Ջոն Ստիւարտ Միլը, նա ևս պաշտպանում էր ցենզային ներկայացուցչութիւնը. նա ասում է. «Կարևոր է, որ (պարլամենտում) հարկերի համար ձայն տուող ներկայացուցիչները ընտրուեն բացառապէս նրանցից, որոնք վճարում են այդ հարկերի մի մասը»։

Նախ՝ այդպէս դատող պարոնները մոռանում են, որ չկայ և ոչ մի քաղաքացի, որ հարկ չվճարէ։ Բուրժուազիայի իդէոլոգներին ձեռնտու է հարկ անուանել միմիայն «ուղղակի» կոչուած հարկերը։ Հապա ա՞յն բազմաթիւ և բազմատեսակ «անուղղակի» հարկերը, որոնց տակ ամենից շատ հեծում են ժողովրդի աշխատաւոր դասերը, իրաւազուրկ խաւերը?

Մի՞թէ բանուորը և գիւղացին, որոնք յաճախ զրկըւում են ընտրութիւններին մասնակցելուց կամ շատ աննշան տեղ է տրւում նրանց ձայնին, մի՞թէ նրանք հարկ չեն վճարում։

Ո՞վ չգիտէ, որ ապրուստի անհրաժեշտ միջոցները, ինչպիսի են թէյը, շաքարը, լուցկին, նաւթը, ծխախոտը և այլն, պետութեան կողմից ենթակայ են ամենախիստ հարկատուութեան։ Իսկ ո՞վ է աւելի գործածում, համեմատաբար, այդ անհրաժեշտ պիտոյքները.—աշխատաւորները։ Նրանք ապրանքը առնելու ժամանակ հէնց վճարում են պետութեանը հարկ։ Բոլոր անուղղակի հարկերից ռուս պետութեան ստացած եկամուտը անում է մէկ միլիարդից աւելի, (1000 միլիոն ր.) ուրիշ խօսքով՝ պետութեան բոլոր եկամուտների կէսից աւելին տալիս են աշխատաւորները՝ անուղղակի հարկերի միջոցով։

Իսկ այդչափ հարկ վճարող աշխատաւորներին իրաւազուրկ են անում։ Բիւրոկրատները և կապիտալիստները սահմանում են այնպիսի օրէնքներ, որոնց համաձայն ընտրութեանը մասնակցելու իրաւունք ունեն միայն այն մարդիկ, որոնք առնուազն որոշած չափով ուղղակի հարկ են վճարում։

Ցենզային ներկայացուցչութեան մի խայտառակ օրինակ է ներկայացնում պրուսական լանդտագը։ Պրուսիայում, 1848-ի յեղափոխութեան շնորհիւ ընդունուեց ընդհանուր ընտրողական իրաւունքը։ Սակայն յեղափոխութիւնից յետոյ եկած ռէակցիայի շնորհիւ de jure ընդհանուր ընտր. իրաւունքը de facto միանգամայն սահմանափակուեց և աղճատուեց։ Էլ համարձակութիւն չունեցաւ պրուսական բիւրոկրատիան ջնջել ընդհանուր ընտր. իրաւունքը, այլ յղացու մի հրէշաւոր միտք, որն և թագցրեց «gleiche Pflichten, gleiche Rechten» (հաւասար պարտականութիւններ,—հաւասար իրաւունքներ) նշանաբանի տակ։

Պրուսական լանդտագի ընտրութիւնները կատարւում են այժմ այսպէս կոչուած Dreiklassensystem-ով, այսինքն՝ Պրուսսիայի ամբողջ ազգաբնակութիւնը ըստ կարողութեան բաժանւում է երեք դասակարգի։ Ամեն մի ընտրողական շրջան էլ ըստ այնմ բաժանւում է երեք կարգի։

Առաջին կարգի մէջ մտնում են ամենահարուստները, որոնք ամենից շատ են վճարում ուղղակի հարկեր. երկրորդ կարգի մէջ մտնում են սովորական հարուստները, որոնք վճարում են միջակ չափով ուղղակի հարկեր. և երրորդ կարգի մէջ մտնում են նրանք, որոնք քիչ ուղղակի հարկ են վճարում, և կամ, չքաւորութեան պատճառով, բնաւ հարկ չեն վճարում։

Այս դեռ բաւական չէ։ Այդ երեք կարգերից իւրաքանչիւրի վրայ գալիս են հաւասար չափով ուղղակի հարկեր։ Ասենք մի ընտրողական շրջան պէտք է վճարէ 3000 ռուբլի ուղղակի հարկ. այդ շրջանի ամեն մի կարգը պիտի վճարէ 1000-ական ռուբլի։ Հետևանքը ահա թէ ինչ է լինում։ 1893-ի ընտրութիւնների ժամանակ Բերլինում կային 18 ընտրողական շրջաններ,

որոնցում առաջին կարգի մէջ մտնում էին միայն մէկ-մէկ ընտրողներ, և 78 ընտրողական շրջաններ, որոնցում երկ-երկու ընտրող էր մտնում երկրորդ կարգի մէջ. իսկ ՄՆացած ամբողջ ազգաբնակութիւնը մասնակցում էր երրորդ կարգի մէջ։ Իսկ նոյն թուի ընտրութիւնները ցոյց տուին, որ Պրուսսիայի իւրաքանչիւր 100 ընտրողից միջին թուով առաջին կարգում մասնակցում էին 3 հոգի, երկրորդում 12 հոգի, իսկ երրորդում՝ 85 հոգի։ Ու ամենից աւելի խայտառակը այն է, որ ամեն մի կարգ օգտւում է հաւասար իրաւունքով ($^1/_3$). ուրիշ խօսքով՝ վերոյիշեալ փաստը օրինակ բերելով՝ առաջին կարգի 3 հոգին ունեն նոյն իրաւունքը, ինչ երկրորդ կարգերի 12-ը կամ երրորդի 85-ը։ Սովորաբար առաջին և երկրորդ կարգի ընտրող տուղերը միանալով տապալում են երրորդ կարգի ձայնը։

Ո՞րչափ անհեթեթ է ընտրողական այս կարգը, որ նոյնիսկ Բիսմարկի նման մի բիւրոկրատ ասել է. «Պրուսսականից էլ աւելի անմիտ և ողորմելի ընտրողական օրէնք չէ մտածուել և ոչ մի ուրիշ տերութեան մէջ»։

Ապացոյց. «Բերլինի այն ընտր. շրջանում, ուր բնակւում են մինիստրներ, երրորդ՝ ամենացածր, կարգի ընտրողների թւում է նաև պետական կանցլեր Բիւլովը՝ ուրիշ մինիստրների հետ միասին. սոքա ծոլորը իրենց շուէյցարների և լակէյների հետ հաւասարապէս ընտրում են երրորդ կարգում։ Նրանց հարևան ընտր. շրջանի 1-ին կարգում մասնակցում են ընդամենը երկու հոգի— Berliner Tageblatt»-ի հրատարակիչը և բանկիր Բլէյխրեդերը։ Իսկ մինիստրական ընտր. շրջանից ոչ հեռու գտնուող թաղում 1-ին կարգի միակ ընտրող է հանդի-

սանում պալատական մսագործ Գեֆտեր, որը, հետևապէս, իւր հաստութեամբ ջախջախում է միւս երկու կարգերի հարիւրաւոր ընտրողներին» *)։

Մինչև վերջերս Պրուսսիայի սոցիալ-դեմոկրատները բոյկոտ էին արել պրուսսական այդպիսի խայտառակ ընտր. սիստեմի վրայ հիմնուած լանդտագին։ Պատճառը պարզ է. այն Պրուսսիայում, ուր ընդհանուր գերմանական ընտրութիւններին ռայխստագի համար ձայն են տուել 1,600,000 սոցիալ-դեմոկրատներ, լանդտագի ընտրութիւններին այդքան ընտրողների ձայնը ոչնչանում է շնորհիւ երեքդասեան ընտր. սիստեմի. դուրս է գալիս, որ 1,600,000=0։

Կարողութեան ցենզ ընտրութեան համար, աւելի կայ պակաս չափով, գոյութիւն ունի նաև եւրոպական ուրիշ երկրներում։ Անգլիայում, օրինակ, պարլամենտական ընտրութիւններին (համայնքների պալատի համար) մասնակցելու իրաւունք ունեն նրանք, որոնք բնակարանի վարձ են տալիս տարեկան առնուազն 100 ռուբլի։

Հետևանքը այն է լինում, որ միլիոնաւոր չափահաս քաղաքացիներ—սեփական բնակարան չունեցող, այլ ծնողների մօտ ապրողներ, չքաւոր բանուորներ, կահաւորած սենեակներում ապրողներ, և այլն զրկւում են ձայնտուութեան իրաւունքից։

Այսպիսի ցենզային սահմանափակումը այն հետևանքն է ունենում, որ 1898-ին Անգլիայում չափահաս ընտրողների թիւը հասնում էր $6^1/_2$ միլիոնի, այն ինչ նոյն թուին Ֆրանսիայում (մօտաւորապէս նոյն չափ ազգաբ-

*) «Государств. строй и политич. партіи, II. 204.

նակութեամբ) ընտրողների թիւը 10½ միլիոնի էր հասնում։

Շուեդիայում ընտրողական իրաւունք ունեն միայն նրանք, որոնք տէր են առնուազն 6,000 քրոն արժէք ունեցող անշարժ կայքի կամ այնպիսի կարողութեան, որ բերում է տարեկան առնուազն 800 քրոն եկամուտ։

Եւրոպական միւս երկրներում ևս՝ Բելգիայում, Աւստրիայում, Վենգրիայում, աւելի կամ պակաս չափով, ընտրողներից պահանջւում է կարողութեան ցենզ։ Նոյնպիսի ցենզ է պահանջւում Ռուսիայում՝ Պետական Դումայի, նաև զեմստվոյական և քաղաքային ինքնավարութեան ընտրութիւններին մասնակցողներից։

Ակներև բան է, թէ որչափ անմիտ և անարդար բան է ընտրութիւններին պահանջել կարողութեան ցենզ։ Հայրենիքին և ազգին ծառայում են ամենքը անխտիր,— իրաւազուրկները ևս առաւել։ Պատերազմի ժամանակ ցենզ չեն պահանջում, աշխատաւոր գիւղացուն և բանւորին կռուի դաշտ են ուղարկում, իսկ ընտրութիւններին նրանց զրկում են ձայնից։

Կարողութեան ցենզին նման է, կամ, աւելի ճիշտն ասած, նրա միւս կողմն է կրթական ցենզը։

Կան մի քանի եւրոպական երկիրներ, ուր ընտրութիւններին մասնակցելու համար կրթական ցենզ է պահանջւում։ Օր. Իտալիայում պահանջւում է առնուազն տարրական դպրոցի աւարտման վկայական։

Ասում են՝ պետական գործերը այնքան բարդ են և դժուարըմբռնելի, որ ամեն ոք չի կարող հասկանալ նրանց նշանակութիւնը և անկիրթ մարդը կարևոր գիտակցութեամբ չի մասնակցի ընտրութիւններին։ Վերոյիշեալ Միլը, որ պաշտպանում է կարողութեան ցենզը, պաշտպանում է նաև կրթական ցենզը։ Նա ասում է. «Ես չեմ կարող թոյլ տալ, որ թուաբանութեան օրէնքները չիմացող և անգրագէտ մարդը մասնակցէ ընտրութիւններին»։ Մեդալի մի երեսը կարողութեան ցենզն է, իսկ միւս երեսը՝ կրթական ցենզը։ Ո՞ւմ յայտնի չէ, որ, գոնէ սովորաբար, կարողութիւն ունեցող մարդիկ կամ նրանց զաւակները աւելի հնարաւորութիւն ունեն կրթութիւն ձեռք բերելու։ Երբ մի երկրում համալսարանականին աւելի իրաւունք է տրւում ընտրութիւններին, այդ նշանակում է, թէ հարուստին է առաւելութիւն տրւում։

Սխալ է կարծել, թէ տգէտ գիւղացուն նախ պիտի կրթել, ապա նրան ընտրողական իրաւունք տալ։ Այդ է եղել բոլոր տեղերի և բոլոր ժամանակների յետադէմ հայեացքների տրամաբանութիւնը։

Եթէ անգրագէտ աշխատաւորները սպասեն, մինչև նրանց «տէրերը» կրթեն նրանց, շատ ժամանակ կանցնի։ Իսկ այդ տէրերը շահ չունեն իրենց շահագործման ենթակայ աշխատաւորների միտքը բանալու։

Ստրուկների ազատութեան ժամանակ էլ Ամերիկայում նրանց «տէրերը» նոյնն էին ասում. նախ հարկաւոր է զարգացնել ստրուկներին, ապա ազատել նրանց. այժմեան ստրուկները չեն կարող օգտուել ազատութեան բարիքներից» *)։ Տէրերին որ ճիշտ՝ նրանք ոչ «նախ» կզարգացնեն իրենց ստրուկներին և ոչ էլ «ապա» ազատութիւն կտան նրանց։ Ռուսաստանի ճորտերը 45 տարի առաջ ազատուեցին և կարողացան ապ-

*) В. В. Водовозовъ, Всеобщ. изб. право на Западѣ եր. 9.

րել առանց իրենց «հայրախնամ» տէրերի հսկողութեան։

Հարկաւոր է նաև մատնանիշ անել այն հանգամանքի վրայ, որ նոյն ոգէտ գիւղացիները արդէն իսկ մասնակցում են գիւղական և համայնական ընտրութիւններին, և կարողանում են օգտուել իրենց իրաւունքից։ Գիւղացին լաւ է իմանում պաշտպանել իւր շահերը։

Վերջապէս, եթէ ոգէտ մասսաները չունենան պարլամենտում իրենց ներկայացուցիչները, հապա ով պիտի պաշտպանէ այնտեղ նրանց տնտեսական և կուլտուրական շահերը. ով պէտք է ազատէ գիւղացուն հարկերի ծանրութիւնից և մեայլ խաւարից. ով պիտի աշխատէ տարածել երկրում ընդհանուր պարտադիր ուսում, որ էլ անգրագէտ չմնայ, որին ընտրողական իրաւունքից զրկելու մասին մտածեն արտօնեալները։

Կրթական ցենզն էլ ուրեմն մի սահմանափակումն է ընդհանուր ընտրողական իրաւունքի մէջ և պէտք է վերացնել այն՝ ուր նա դեռ գոյութիւն ունի։

Մի ուրիշ տեսակ ցենզ է այն, որ եւրոպական շատ երկրներում ընտրողից պահանջւում է, որ նա մի որոշ ժամանակ ապրած լինի իւր ընտրողական շրջանում։ Ֆրանսիայում պահանջւում է 6 ամիս, Անգլիայում 1 տարի, ուրիշ տեղեր 1—2—3 տարի։

Այս անմիտ սահմանափակումն էլ պատճառաբանւում է նրանով, թէ մարդ մի առժամանակ ապրած լինելով իւր ընտրողական շրջանում՝ կարող է ծանօթ լինել տեղի պայմաններին և գիտակցաբար ընտրել։

Ի՞նչ է այդ սահմանափակումը, եթէ ոչ ցենզային արտօնութեան մի ուրիշ կողմը։ Յիրաւի։ Ո՞վ է ստիպուած լինում թողնել իւր տունն ու տեղը և ուրիշ

վայրեր երթալ՝ աշխատանք որոնելու, եթէ ոչ աշխատաւորը։ Մանաւանդ ներկայ ժամանակում, տնտեսական զարգացման շնորհիւ, գիւղերից և փոքր քաղաքներից ահագին թուով աշխատաւոր ձեռքեր են դիմում դէպի քաղաքները՝ հացի կտոր վաստակելու նպատակով. մի համայնքից միւս, շատ անգամ մեծ քաղաքի մի թաղից միւսը տեղափոխուելով՝ նրանք չեն ունենում հաստատուն բնակավայր. էլ չեմ ասում այն մշտական թափառաշրջիկներին (Sachsengänger), որոնք բախտից հալածուած ամբողջ կեանքում մի տեղից միւսն են շրջում։

Ո՞րչափ շատ է այն բանուորների թիւը *), որոնք մեր ժամանակի արդիւնագործական կենդրոններում պատահմամբ միայն ընկել են աշխատանք գտնելու. ահագին թիւ են կազմում նաև այն բանուորները, որոնք աշխատում են երկաթուղիների, նաւերի և ուրիշ տեսակի տեղափոխական գործերում։ Յիշած սահմանափակման շնորհիւ այս կատեգորիայի բոլոր աշխատաւորները զրկւում են ձայն տալու իրաւունքից, քանի որ նրանք երբէք երկար ժամանակով մի տեղ չեն բնակւում։

Ուրեմն այս ցենզն էլ ուղղուած է դարձեալ ժողովրդի աշխատաւոր, չքաւոր խաւերի դէմ. նա ևս հանդիսանում մի տեսակ կարողութեան ցենզ։

Բոլորովին աւելորդ է այդ ցենզը։ Թէ մարդ որտեղ է ապրում—գիւղում թէ քաղաքում, մի ժամանակ մի տեղ, յետոյ ուրիշ տեղ,—այդ բոլորովին չի խանգարում, որ նա իրաւունք ունենայ ընտրութիւններին մասնակցելու։ Ընտրողը շատ լաւ գիտէ, թէ ով է ժողովրդի ճըշ-

*) Այդպիսիների թիւը Լոնդոնում հաշւում են 1,292,437. տես Ch. Bouth, Life and Labour of the Pople of London, II եր. 20 և շար.

մարիտ բարեկամը, հետևապէս՝ թէ ում պիտ ձայն տալ-չէ՞ նը նա անդամ է որոշ կուսակցութեան, որի թեկնածուների անուններն իմանալուց հեշտ բան չկայ։ Վերջապէս, ինչո՞ւ պէտք է այդ ցենզը հնարել հէնց այն դէպքում, երբ միլիոնաւոր աշխատաւոր մարդկանց իրաւունքից զրկել հարկաւոր է։ Հապա երբ հարկաւոր է հարկ առնել աշխատաւորներից՝ մի՞թէ նրանք խաթր կանեն և նրանցից հարկ չեն առնի մինչև «որոշ» ժամանակ։ Դեռ աւելին։ Երբ հարկաւոր է պաշտպանել հայրենիքը, որի անունով ճառում են միշտ արտօնեալները, մի՞թէ զինուոր չեն կանչի աշխատաւորներին, մինչև որ նրանք «որոշ» ժամանակ, մի համայնքում հաստատուն բնակութիւն ունեցած չլինեն։

Չէ՛, կեղծ ու նենգապատիր միջոց է այդ ցենզը՝ ուղղուած միլիոնաւոր աշխատաւորների դէմ. հարկաւոր է վերջ տալ ստորացման այդ մնացորդներին։

Ցենզային սահմանափակման մի ուրիշ տեսակն այն է, որ հասարակական միջոցներից օգտուողները զրկւում են ընտրողական իրաւունքից (Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա)։ Դրանց մեծագոյն մասը կազմում են աշխատազուրկ ինվալիդ կամ ծերացած բանուորներ։ Այս դէպքում էլ իրաւազուրկ են դառնում աշխատաւորները։

Այս իրաւազրկութեան սկզբունքը գտնում է իւր պաշտպանները. «Նա, որ չէ կարող սեփական աշխատանքով գոյութիւն պահպանել, այդպիսին իրաւունք չունի ուրիշի փողերը յօգուտ իւր կարգադրել» (Ջ. Ստ. Միլլ)։

Բուրժուական իդէօլոգները մոռանում են միշտ, որ աշխատելու հնարաւորութիւն չունեցող ապաբախտները զոհ են միայն բուրժուական կարգերի, որ նրանց աշխատանքի ոյժը հարստահարել-ցամաքացրել են այժմ նրանց

իրաւազուրկ անող տէրերը։ Կարծէք իրանց անձնական դժբախտութիւնը հերիք չէ, կամենում են նրանց հասարակական գործերին մասնակցելուց էլ զրկել։

Անտեղի չի լինիլ, ցոյց տալու համար Միլլի նման դատողների կարծիքի անհեթեթութիւնը, առաջ բերել հետևեալ կուրեօզը, *) որ պատմում է յայտնի իրլանդացի Օ'Կանելը։ Մի իրլանդացի—ասում է նա,—մի էշ ունէր, որով նա իւր օրական պարէնն էր հայթայթում. բայց տեսնելով որ էշը սատկեց, և իրլանդացին մնաց պարապ ու ստիպուած եղաւ հասարակական օգնութեան դիմել, որի շնորհիւ էլ նա զրկուեց ընտրողական իրաւունքից։ Օ'Կաննելը հարցնում է. այս դէպքում ո՞վ ունէր ընտրողական իրաւունք,—մարդը, թէ՞ էշը։

Ընտրողական իրաւունքից զրկւում են բոլոր երկրների զինուորականները։ Այս հանգամանքը պատճառաբանւում է նրանով, թէ զօրքը ընդհանրապէս առանձնացած մի կաստայ է, իր սեփական դիսցիպլինով և կանոններով, նա պէտք է հեռու պահէ իրեն կուսակցութիւններից, այլապէս կարող է հեշտութեամբ կորցնել կարգապահութիւնը և խռովութիւնների տեղիք տալ։ Ասում են նաև, թէ զինուորները ըստ մեծի մասին կդառնան սոսկ գործիք իրենց հրամանատարների ձեռքին, սրանց ցանկացած մարդուն էլ ձայն կտան։ Հասարակապետական-դեմոկրատական երկրներում բացի այդ երկիւղ են կրում, թէ մի գուցէ մի անուանի գեներալ փառասիրութեամբ զօրքը իւր կողմը քաշէ և նորից ստեղծէ ցարիզմ։

Հէնց այն հանգամանքը, որ պետութիւնն է արգե-

---

*) տես Юшкевичъ, Объ избирательномъ правѣ, 1905, երես 13.

լում իւր զինուորներին մասնակցել ընտրութիւններին, հէնց այդ բանը պէտք է մեր մէջ կասկած զարթեցնէ արգելման մոտիւների վերաբերմամբ։

Զպէտք է բնաւ հաւատալ, թէ կառավարութիւնը իւր զօրքով ուզում է «բարձր ճնալ կուսակցութիւններից»։ Իրողութիւնն այն է, որ վախենում է զինուորականների մասնակցութիւնից ընտրութիւններին։ Ընտրութիւնները լաւագոյն դպրոց են քաղաքական հասունութիւն ձեռք բերելու համար։ Վերջ ի վերջոյ զօրքը այդ ճանապարհով ձեռք կ՝բերէ գիտակցութիւն, նա կճանաչէ իւր ճշմարիտ բարեկամին ու թշնամուն և ըստ այնմ էլ դիրք կբռնէ, մանաւանդ որ զօրքի մեծագոյն մասը աշխատաւոր, ճնշուած տարրերից է։

Այս չարիքի առաջն առնելու համար բոլոր երկրների սոցիալիստական կուսակցութիւնները ցոյց են տալիս մի արմատական միջոց,—վերացնելու մշտական զօրքը և մտցնել միլիցիայ. դրանով էլ վերջ տրուած կըլինէր յիշեալ սահմանափակմանը։

Նաև պետութեան պաշտօնեաները (չինովնիկները) սահմանադրական երկրներում զրկւում են պասսիւ—և ոչ ակտիւ—ընտրողական իրաւունքից։ Այս էլ կատարւում է երկու կերպ։ Մի քանի երկրներում իսպառ արգելւում է ընտրել չինովնիկներին իբրև ժողովրդական ներկայացուցիչ. ուրիշ երկրներում այդ թոյլատրւում է, սակայն միայն այն պայմանով, որ ընտրուածը, եթէ համաձայն է լինել ժողովրդական ներկայացուցիչ, նա պիտի հրաժարուի իւր նախկին պաշտօնից։

Չինովնիկներին պասսիւ ընտրողական իրաւունքից զրկելը պատճառաբանւում է երկու կերպ։ Առաջին՝ ասում են, թէ պաշտօնեաների մասնակցելը առաջ կբերէ

դիսցիպլինայի խանգարում. անյարմար բան է միանգամայն, որ ստորադրեալ չինովնիկը հանդէս գայ պարլամենտում և իրեն ստորադրող մինիստրների կամ ուրիշ պետական մարդկանց հետ քաղաքական պայքարի մէջ մտնի, քննադատէ վերջինների առաջարկած օրինագծերը։ Աւելի կարևոր պատճառաբանութիւնն այն է, թէ օրէնսդիր, դատաստանական և գործադիր մարմինները աւտոնոմ պիտի լինեն, հետևապէս՝ չինովնիկները, գործադիր մարմնի անդամները, չեն կարող մասնակցել օրէնսդիր ժողովում։

Առաջին պատճառաբանութեամբ կառավարութիւնն է արգելք հանդիսացողը, երկրորդ պատճառաբանութիւնը՝ երբեմն ժողովրդական ներկայացուցիչներն են անում, — օրինակ Անգլիայում. օրէնսդիր մարմինը կամենում են ազատ պահել արքայական ոտնձգութիւններից՝ նրա գործիք չինովնիկութեան միջոցով։

Իսկական դեմոկրատական պետութեան հոգսերից մէկը պիտի լինի նաև այդ արգելքի առաջն առնել։

Ինչպէս զօրքը, այնպէս էլ չինովնիկութիւնը պէտք է գլխովին վերափոխել, նրանց մոտեցնել հասարակութեան միւս խաւերին, ոչնչացնել կաստայական շահերը և կարգերը։

Ընդհանուր ընտրողական իրաւունքի դէմ դնալ կը նշանակի նաև՝ այլացեղ եւ այլակրօն տարրերին զրկել ձայն տալու իրաւունքից։ Ամեն մի պետութեան մէջ, ևս աւելի Ռուսիայում, բնակւում են բազմացեղ ժողովուրդներ իրենց յատուկ կրօններով։ Ասել թէ օր. Ռուսիայում միայն իսկական «ռուս» մարդիկ, այն էլ միայն «պրաւօսլաւները» պիտի մասնակցեն ընտրութիւններին՝ դա անարդար բան է։

Յայտնի է, թէ մեզնում, նաև ուրիշ տեղեր, որչափ հալածուած են հրէաները. ոչ միայն նրանց զրկում են քաղաքական-հասարակական գործերին մասնակցելու իրաւունքից, այլ և նոյն իսկ արգելում են նրանց որոշ սահմաններից դուրս ապրելը։ Զրկանքի և հալածանքի ենթակայ են նմանապէս ուրիշ ժողովուրդներ, նոյն իսկ ոչ-պրաւօսլաւ ռուսները (սեկտանտներ և այլն)։ Դուխոբորների և ուրիշ աղանդաւորների կրած հալածանքները Ռուսիայում՝ ամենքին յայտնի են։

Այս բոլորի անարդար լինելն էլ ակնյայտ է. Ամենքն էլ պետութեան քաղաքացիներ են, ամենքն էլ հարկ են վճարում, զինուոր են տալիս, հետևապէս ամենքն էլ պէտք է օժտուած լինեն համահաւասար իրաւունքներով։ Չպէտք է մոռանալ նաև այն, որ այդ այլացեղ ժողովուրդներից շատերը անցեալում ունեցել են իրենց սեփական պետութիւնը, եղել են անկախ և տէր երկրի. միայն ժամանակի ընթացքում նրանց հայրենիքը գրաւուել և Ռուսիայի մաս է դարձել. կնշանակէ նրանք բարոյական և պատմական իրաւունք են վայելում պետական գործերին մասնակցելու։

Յիշած բոլոր ցեղերից և սահմանափակումներից էլ աւելի անարդար և անհիմն է կանանց ընտրողական իրաւունքից զրկելը։ Մարդկութեան ամբողջ կէսը զրկել իրաւունքից և այդպիսով խոչընդոտ հանդիսանալ կուլտուրական յառաջադիմութեան՝ դրանից աւելի երկինք աղաղակող անարդարութիւն և բռնութիւն չկայ։

Կանանց ընտրողական իրաւունք տալուն դէմ եղողները այդ բանը փաստաբանում են նրանով, թէ կինը անընդունակ է պետական հասարակական գործերին մասնակցելու. ասում են, թէ «բնական» է կնոջ համար մնալ տանը, զբաղուել միայն ընտանեկան գործերով, տնային տնտեսութեամբ։ «Տղամարդը պատկանում է հասարակութեանը, իսկ կինը՝ ընտանիքին», ասում է Գ. Մայէր*)։ Ասում են՝ եթէ կինը մասնակցէ քաղաքական գործերին, նա կը զրկուի կանացի, իւր սեռին յատուկ, քնքշութիւնից։ Վերջապէս ասում են, թէ կանայք աւելի պահպանողական են, աւելի ենթակայ կղերի ազդեցութեանը, հետևապէս, եթէ նրանց իրաւունք տրուի ընտրելու և ընտրուելու, այն ժամանակ նրանք աւելի յետադէմ տարրերին կաջակցեն. այդ է կեղծապատիր «քաղաքագէտների» վերջին փաստաբանութիւնը։

Սակայն յիշեալ բոլոր պատճառաբանութիւններից և ոչ մէկը չէ դիմանում թոյլ քննադատութեան անգամ։

Ո՞վ ասաց, թէ կանայք անընդունակ են. մի՞թէ քիչ են եղել և քիչ կան յայտնի հասարակական կին գործիչներ. եթէ, տղամարդկանց հետ համեմատած, նրանք չեն տուել յայտնի քաղաքական տաղանդներ, միակ պատճառն այն է, որ նրանք իրաւազուրկ են եղած, հնարաւորութիւն չեն ունեցել զարգացնելու իրենց մըտաւոր ոյժերը։ Մի՞թէ քիչ է այժմ այն կանանց թիւը, որոնք աւարտել են միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ, պարապում են բժշկութեամբ, ուսուցչութեամբ, առևտրական և ուրիշ գործերով, ուր ցոյց են տալիս տղամարդուց ոչ պակաս արդիւնք։ Քի՞չ է այն կանանց թիւը, որոնք գործարաններում, արհեստանոցներում և ուրիշ աշխատավայրերում օրնիբուն քրտինք են թափում և իրենց օրուայ պարէնը հայթայթում։ Ո՞ւր են այդ դէպքում այն կեղծաւոր փարիսեցիները, որոնք «անբնական»

*) Ընտր. իրաւունք, եր. 445.

են համարում կնոջ համար տնից դուրս գբաղուելը, որոնք ասում են «կինը պատկանում է ընտանիքին»։ Ինչու կապիտալիստ—վաշխառուները կանանց ամուսիններին այնքան աշխատավարձ չեն տալիս, որ նրանք կարողանան ընտանիք պահել և իրենց կնոջ համար տնային աշխատանքներ թողնել։

Մեզ չէ հետաքրքրում նաև այն, թէ արդեօք կանայք աւելի պահպանողական են թէ ազատամիտ. կնոջ մէջ մենք ուզում ենք յարգել մարդուն և ոչ այս կամ այն քաղաքական համոզմունքը։ Այդպէս որ լինէր՝ դէ ամենից առաջ ձայնի իրաւունքից պէտք էր զրկել այն յետադէմներին, որոնք կանանց ձայնի իրաւունքից զրկելն են փաստաբանում։

Սխալ է ասել, թէ կինը չէ կարող յառաջադէմ քաղաքական—հասարակական գործիչ լինել։ Անցեալը և ներկան հակառակն են ցոյց տալիս։ Ո՞ւմ յայտնի չեն Մարիա Սպիրիդոնովնայի նման հերոս կանայք, որոնք ամբողջ հոգով տոգորուած են ծառայելու իրենց ժողովրդին՝ քաղաքական—հասարակական ասպարիզում։

Անարդարութիւն է մի համալսարանական, կրթուած կնոջ զրկել ընտրողական իրաւունքից հէնց նրա համար, որ կին է, իսկ այդ կնոջ տղամարդ ծառային, որ անգրագէտ է, տալ ձայնի իրաւունք։

Անարդարութիւն չէ՞ աչքաթող չանել կանանց, երբ հարկաւոր է նրանցից հարկ վերցնել, երբ հարկաւոր է շահագործել նրանց էժան աշխատանքը, և աչքաթող անել նրանց՝ երբ հարկաւոր է նրանց ձայնից զրկել։ Ո՞վ պէտք է հապա ժողովրդական ներկայացուցչութեան մէջ պաշտպանէ նրանց, իրաւազուրկների, շահերը։ Ինչու ամեն մի դասակարգ կարող է ունենալ իւր ներկայացուցիչները պարլամէնտում, իսկ կանայք՝ ոչ։

Վերջապէս ովիրաւունք տուէք տղամարդկանց՝ կանանց վերաբերմամբ զրկողի և դատաւորի դերը ստանձնել. ինչ իրաւունքով տղամարդն անում է այդ. հապա եթէ կինը այդպէս վարուելու լինէր տղամարդու վերաբերմամբ. ինչու մարդկութեան ամբողջ կէսը մատնել անգործութեան։

Մեր ժամանակի ամենաթանկագին սեփականութիւններից մէկը մարդու ազատութիւնն է։ Թոյլ տուէք նրան, տղամարդ է նա թէ կին, այդ միևնոյնն է, որ զարգացնէ, լարէ իւր ոյժերը հասարակութեանը ծառայելու համար։ Կեանքը, գործը ցոյց կտայ հետևանքը. անկարողները յետ կմնան անխտիր։

Կանանց ազատագրութեան հարցը իւր պատկառելի անցեալը ունի։ Այժմ լուսաւոր երկրներում անդուլ կռիւ է մղւում այդ արդար դատի համար։ Մինչև որ կինը չստանայ քաղաքական իրաւունքներ՝ նա չի կարող իրեն վերջնականապէս ազատագրել ստրկացման միւս մնացորդներից։ Եւ մենք տեսնում ենք, որ այդ դատը տանում է կամաց-կամաց իւր յաղթանակը։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների և Աւստրալիայի մի քանի շտատներում, նաև Նոր Զելանդիայում, կանայք արդէն ձեռք են բերել ընտրողական իրաւունք։ Փորձը ցոյց է տուել, որ կանայք ոչ թէ խանգարում են երկրի յառաջադիմութիւնը, այլ, ընդհակառակը, աւելի են նպաստում նրա ծաղկմանը։ Այդ ուղղութեամբ են աշխատում նաև բոլոր երկրների բուն ժողովրդական տարրերը։ Բոլոր դէմոկրատ և սոցիալիստական կուսակցութիւնները իրենց ծրագրի մէջ մտցրել են կանանց հաւասարութիւնը տղամարդկանց հետ՝ բոլոր ասպարէզներում։

Երբ մենք պահանջում ենք ընդհանուր ընտրողական

իրաւունք, այդ դէպքում ի նկատի ունենք, իհարկէ, միայն չափահասներին։

Սակայն հարց է արդէն, թէ մարդ ո՞ր հասակից պիտի համարուի չափահաս։ Այստեղ է ահա, որ տարբերւում են կարծիքները։ Բնորոշ է այն, որ բոլոր երկրների արտօնեալ դասակարգերը ընտրողական իրաւունք վայելելու համար պահանջում են աւելի մեծ տարիք, քան դէմոկրատիական կուսակցութիւնները։

Այս էլ՝ շատ պարզ պատճառով։ Քանի դեռ մարդ երիտասարդ է, չկաշկանդուած ընտանեկան, պաշտօնավարութեան և այլ տեսակի հոգսերով, նա աւելի էլ ազատասէր է, արմատական, աւելի թեքուած դէպի քաղաքական ազատ մթնոլորտը. իսկ երբ նա անցնում է 25 տարին, ամուսնանում է, կապւում է ընտանիքի հետ՝ նա դառնում է աւելի դանդաղաշարժ, աւելի պակաս ազատասէր. պայմաններն են առաջացնում այդ։ Երբ մէկը պաշտօն ունի, կապեր իր գործատիրոջ հետ, նա հեշտութեամբ յանձն չի առնի կռուողի, պայքարողի դերը, այլ նա շատ անգամ կյարմարուի, ձայն կտայ նրան, որը հաճելի է իւր «խազէյնին»։

Այս տեսակէտից էլ քաղաքական հասունութեան համար պէտք է ընդունել նոյն տարիքը, ինչ որ քաղաքացիական հասունութեան համար—21 տարեկան հասակը։ Եթէ մէկը, այդ հասակին հասնելով, իրաւունք ունի սեփական գործ սկսելու, առևտրական և այլ տեսակի դաշինքներ կռելու, եթէ նա կարող է զինուոր դառնալ, ինչո՞ւ չի կարող նոյն հասակին գիտակցաբար կատարել նաև իւր պարտականութիւնները պետութեան վերաբերմամբ։ Բոլոր դեմոկրատիական կուսակցութիւն-

ները պահանջում են ընտրողական իրաւունք տալ 20—21 տարեկան հասակից սկսած։

Այսպէս չէ սակայն միշտ իրականութեան մէջ, մանաւանդ յետադէմ երկրներում։ Քաղաքական հասունութեան համար Աւստրիայում, Պրուսիայում, Սերբիայում պահանջւում է 24 տարեկան լինել. Բելգիայում, Հոլլանդիայում, Նորուեգիայում, Գերմանիայում, նաև ռուսական Պետական Դումայի համար, 25 տարեկան, իսկ Դանեմարքում մինչև իսկ 30 տարեկան հասակը։ Ընդհակառակը աւելի դեմոկրատիական պետութիւններում ընտրողական իրաւունք ունեն 21 տարեկանները արդէն (Ֆրանսիա, Անգլիա, Միացեալ-Նահանգներ և այլն)։ Շուէյցարական դաշնակցական խորհրդին մասնակցելու համար պահանջւում է 20 տարեկան հասակ, իսկ առանձին կանտոնների ընտրութիւնների համար՝ նոյնիսկ 19—17 տարեկան հասակ։

Այն ևս կայ, որ մի քանի երկրներում աւելի բարձը տարիք է պահանջւում պասսիւ ընտրողական իրաւունք վայելելու համար, քան ակտիւ.—Ֆրանսիայում՝ 25 տար. (ակտիւ 21 տար.), Աւստրիայում, Բաւարիայում և Պրուսիայում՝ 30 տարեկան։ Աւստրիայում պահանջւում է նոյնիսկ, որ պասսիւ ընտրողական իրաւունք վայելողը երեք տարի շարունակ միևնոյն համայնքում ապրած լինի. Պորտուգալիայում այդպիսիներից պահանջւում է, որ նրանք ունենան տարեկան առնուազն 2,200 ֆրանկ զուտ եկամուտ։

Ակնյայտ է, որ միանգամայն աւելորդ է այս սահմանափակումը։ Երբ մէկը քաղաքական հասունութեան է հասել՝ նշանակում է որ նա կարող է և ընտրւել, եթէ ժողովուրդը ցանկանում է նրան ընտրել. ինչո՞ւ զրկել ժողովրդին երիտասարդ, թարմ ներկայացուցիչներից։

Զմոռանանք, որ Գլադստոնը 22 տարեկան էր, երբ նա անգլիական պարլամենտի յայտնի անդամներից մէկն էր։

Ըստ երևոյթին այնքան էլ մեծ նշանակութիւն չունի այս տարբերութիւնը։ Իսկ այդ սխալ է։ Գրադովսկին *) հաշուել է, որ 21—25 տարեկան ունեցող ազգաբնակութիւնը կազմում է բոլոր ընտրողների 15%, ուրիշ խօսքով՝ հարցը վերաբերում է հարիւր հազարաւոր և միլիոնաւոր ակտիւ, երիտասարդ ընտրողների։

Ընդհանուր ընտրողական իրաւունքը, ինչ խօսք, չէ պահանջում անխտիր ամենքի մասնակցութիւնը ընտրութիւններին։ Շատ հարց է, որ երեխաները և ընդհանրապէս անչափահասները (20 տար. ցած) չեն կարող գիտակցել այդ իրաւունքի նշանակութիւնը։ Նմանապէս հոգեկան հիւանդները, որոնք զրկուած են գիտակցական կեանք վարելուց, չեն կարող ընտրութիւններին մասնակցել։ Նաև այն մարդիկ, որոնք դատարանով ճանաչուած են իբրև յանցագործներ (աւազակութեան, ընտրողներին կաշառելու համար, և այլն), նրանք ևս չը-պէտք է ընտրեն։ Յանցագործ չպէտք է համարել անտարակոյս այսպէս կոչուած քաղաքական յանցաւորներին։ Ինքնըստինքեան հասկանալի է նաև այն, որ ընտրողական իրաւունք վայելել չեն կարող օտարհպատակները։

Ընդհանուր ընտրողական իրաւունքը համարւում է հրամայողական պահանջ բոլոր դեմոկրատիական կուսակցութիւնների ծրագրներում։ Այդ ճանապարհով էլ, աշխատաւոր մասսաների քաղաքական կռուի ազդեցութեան տակ, առաջ է գնում արևմտեան ազատ երկրների ներկայացուցչութիւնը։ Ընդհ. ընտրողական իրաւունք գոյութիւն ունի արդէն Մ.-Նահանգներում, Շուէյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում (ռայխստագի համար) և այլն։

*) «Государственное право важнѣйшихъ европейскихъ державъ», стр. 321.

Այսպէս ուրեմն, ընտրողական իրաւունքը պիտի լինի անպատճառ ընդհանուր, այդ են պահանջում ժողովրդի ճշմարիտ շահերը։ Չպէտք է տարբերութիւն դնել ազնուականի և քաղաքացու, կալուածատիրոջ և գիւղացու, բուրժուայի և բանուորի, կնոջ և տղամարդու մէջ—ամենքին էլ անխտիր պէտք է իրաւունք տալ թէ ընտրելու և թէ ընտրուելու։ Չէ՞ որ այդ տարբեր դասակարգի և սեռի անդամները անխտիր անհրաժեշտ գործոններ են պետական կեանքում։ Քանի որ բոլորն էլ ծառայում են հայրենիքին, ունեն իրենց քաղաքացիական և պետական պարտականութիւնները, բնական է, որ բոլորն էլ պէտք է ունենան նաև իրաւունք։ Ինչպէս որ մարդու օրգանիզմը առողջ և կատարեալ կլինի միայն այն ժամանակ, երբ նրա ամեն մի անդամը կատարէ իւր ֆունկցիան, նմանապէս և մի պետութիւն բարօրութիւն կունենայ, կառաջադիմէ այն ժամանակ, երբ նրա բոլոր քաղաքացիները պարտականութիւնների հետ միասին կունենան նաև իրաւունք։ Մի երկրում չի կարող գոյութիւն ունենալ իսկական ժողովրդապետութիւն, եթէ այնտեղ չլինի ընդհանուր ընտրողական իրաւունք։

Ուրեմն բոլոր նրանք, որոնք ճշմարիտ հայրենասէրներ են, որոնք սիրում են ազատութիւնը և յարգում են ժողովրդի կամքը, այդ ամենքը միաբերան պիտի պահանջեն՝

Ընդհանուր Ընտրողական իրաւունք։

IV. ՀԱՒԱՍԱՐ ԵՒ ՊՐՈՊՈՐՑԻՈՆԱԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաւական չէ, որ ընտրողական իրաւունքը լինի ընդհանուր, նա պիտի լինի նաև հաւասար։ Բաւական չէ, որ պարլամենտական և այլ ընտրութիւններին մի երկրում մասնակցում է բոլոր չափահաս ազգաբնակութիւնը. անհրաժեշտ է նաև, որ հասարակութեան բոլոր խաւերը, առանց դասակարգի, ազգի և սեռի խտրութեան, որ ամենքն էլ ունենան հաւասար ձայն, մէկին չտրուի աւելի ձայնի իրաւունք, միւսին պակաս. մի խօսքով՝ պէտք է ընտրութիւններին իրականացնել, ինչպէս անգլիացի դեմոկրատներն են առաջին անգամ պահանջել, one man—one vote-ի, այսինքն՝ «մէկ մարդ—մէկ ձայնի» սկզբունքը։ Իւրաքանչիւր ընտրող պիտի ունենայ միայն մէկ ձայն, և ոչ աւել։

Ժամանակակից դեմոկրատիան հիմնուած է քաղաքացիների կատարեալ հաւասարութեան սկզբունքի վրայ, նա ժխտում է ամեն մի ֆէօդալական և այլ տեսակի արտօնութիւններ, որոնք ժառանգութիւն են միջնադարեան ժամանակի։ Անհրաժեշտ է այդ հաւասարութիւնը, որպէսզի իսկապէս գործնական լինեն ընդհանուր ընտրութիւնները։

Ա՛յս են պահանջում բոլոր երկրների դեմոկրատիական կուսակցութիւնները։

Շատ պարզ է և հասկանալի, որ. այսպէս էլ պէտք լինէր։ Բայց այդպէս չէ իրականութիւնը։ Այս կամ այն երկրում խախտւում է հաւասար ընտրութեան սկզբունքը՝ զանազան անհիմն պատճառաբանութիւններով։ Այստեղ, սակայն, մի բան պարզ է. հաւասար ընտրութեան սկզբունքի խախտումը նպատակ ունի միմիայն պաշտպանել

ունևոր, արտօնեալ դասակարգերի շահերը և ոտնահար անել աշխատաւոր դասակարգերի իրաւունքը։ Ահա թէ ինչպէս։

Անգլիայում, ինչպէս տեսանք, ընտրողական իրաւունքը հիմնուած է ցենզի վրայ. մի որոշ կարողութիւն, մի կալուածք ունեցողին միայն տրւում է ընտրող. իրաւունք։ Ըստ այդմ էլ Անգլիայում եթէ մէկը հարուստ է, զանազան ընտրողական շրջաններում էլ կալուածքներ կամ առևտրական ձեռնարկութիւններ ունի, այդ կապիտալիստին իրաւունք է տրւում մասնակցել ընտրութիւններին միաժամանակ այն բոլոր ընտրող. շրջաններում, ուր նա կալուածքներ ունի. մանաւանդ որ ընտրութիւնները Անգլիայում մէկ օրում չեն կատարւում։ Այսպիսով էլ պատահում է, որ բուրժուա-կապիտալիստի մէկը, շնորհիւ միայն իւր հարստութեան, ձեռք է բերում մէկից աւելի ձայնի իրաւունք, երբեմն 10, 20, նոյնիսկ 30, և աւելի։

Պարզ է ուրեմն, որ մենք այստեղ գործ ունենք ցենզային սիստեմի մի ուրիշ տեսակի, կամ աւելի ճիշտն ասած, թագնուած ցենզի հետ։ Այն ընտրողական — սիստեմը, որով մէկին կամ միւսին արտօնութիւն է տրւում միևնոյն պարլամենտի ընտրութիւններին մէկից աւելի ձայն ունենալու, կոչւում է պլուրալսիստէմ (յոգնակի ձայնատուութիւն կամ, ուրիշ խօսքով, տարբեր ընտրողներ տարբեր թուով ձայն ունին և այն մարդիկ, որոնք կողմնակից են պլուրալսիստեմին, կոչւում են պլուրալիստներ։

Պլուրալսիստեմի կողմնակից են եղել շատ լիբերալներ, որոնց մէջ յիշելի է Ջ. Ստ. Միլլին։ Սա և ուրիշները պաշտպանում են այն հայեացքը, որ չէ կարելի

կրթուած և անկիրթ մարդուն նոյն թուով ձայնի իրաւունք տալ։ Ինչպէս տեսնում ենք այստեղ էլ հանդէս է գալիս թագնուած կրթական ցենզը, որը իւր կարգին սերտ առնչութիւն ունի կարողութեան ցենզի հետ։

Միլլն ասում է. «Միայն վնաս և ոչ թէ օգուտ կարելի է սպասել այն բանից, երբ մի երկրի հիմնական օրէնքներ յայտարարեն, թէ քաղաքական իշխանութեան վրայ տգիտութիւնն ունի նոյն իրաւունքը, ինչ գիտութիւնը»։

Իսկ Գուստաւ Ֆլոբէր, ըէալիզմի տաղանդաւոր հիմնադիրը Ֆրանսիայում, Ժորժ Զանդին ուղղած մի նամակի մէջ ասում է, թէ նա իր ձայնը հաւասար է համարում 20 ընտրողների ձայներին։

Միլի և ուրիշի բուրժուական իդէօլոգների, յատկապէս ինդիւիդուալիստների փաստաբանութիւնն այն է, թէ կրթուած մարդկանց պէտք է տալ մէկից աւելի ձայնի իրաւունք, որպէսզի այդպիսով քաղաքական զարգացումը կարևոր բարձրութեան վրայ կանգնած մնայ։

Պարզ է, որ այդպիսով կրկին պաշտպանուած են լինում բուրժուազիայի շահերը. չէ՞ որ բանուորը և գիւղացին չունեն այն նիւթական միջոցները, որոնցով նրանք կարողանային պահանջած կրթական ցենզը ձեռք բերել։ Բացի դրանից՝ պլուրալիստները այն կարծիքն են յայտնում, թէ հաւասար ընտրութիւն եթէ լինի՝ այդ դէպքում աշխատաւոր դասակարգը թուական բազմութեան շնորհիւ, դիւրութեամբ իւր ձեռքը կգցի քաղաքական իշխանութեան ղեկը և այսպէսով կհաստատէ իւր դասակարգային իշխանութիւնը։

Դրան պիտի առարկել նախ այն, որ հաւասար ընտրութեան կողմնակիցները այդ պահանջում են սկզբուն-

քով, ոչ թէ այս կամ այն դասակարգի, այլ ընդհանրութեան շահերն ի նկատի ունենալով. չէ՞ որ ամեն մի քաղաքացի, տգէտ թէ գիտուն, բոլորն էլ իրենց տեղն ունեն քաղաքական կազմի մէջ և իւրաքանչիւրը կատարում է մի անհրաժեշտ ֆունկցիա։ Տասնեակ դարեր առաջ դեռ Արիստոտելն յայտնել է այն ճշգրիտ հայեացքը, թէ պետութիւնը առևտրական ընկերութիւն չէ, ուր շատ փող տուողները շատ էլ իրաւունք ունենան, պետական գործունէութիւնը չի կարելի փողի վերածել, և ոչ էլ ամեն մի քաղաքացու ծառայութիւնը պետութեան թուերով արտայայտել։

Եւ, որ գլխաւորն է, մի՞թէ կարծում են բուրժուա իդէօլոգները, թէ պլուրալիստեմով կառնուի դասակարգային իշխանութեան առաջը։ Մի՞թէ այն չի իրողութիւնը, որ պլուրալիստեմ մտցնելով—որ նոյնն է թէ հարուստներին գերիշխող դարձնել—իրօք մտցնում է մի դասակարգի,—ոչ պրոլետարիատի, այլ բուրժուազիայի դասակարգային գերիշխանութիւնը, մի խօսքով՞ պլուտոկրատիա։ Պարզ է, որ այո։

Սակայն պարզ է մեզ համար նաև այն, որ հաւասար ընտրութիւն մտցնելով կհիմնուի ոչ թէ այս կամ այն դասակարգի քաղաքական գերիշխանութիւնը, այլ ամբողջ ժողովրդի վեհապետութիւնը։

Այս են պահանջում բոլոր զուտ ժողովրդական կուսակցութիւնները։

Ընտրութեան պլուրալիստեմ գոյութիւն ունի և Բելգիայում, ուր թէև ընդունուած է ընդհանուր ընտրողական իրաւունքը։ Ամեն մի 25 տարեկան քաղաքացի տղամարդ, որ ապրել է մէկ տարի շարունակ մի երկրում ունի մէկ ձայնի իրաւունք։

Սակայն բացի մէկ ձայնից աւելորդ մէկ ձայն էլ ունեն հետևեալ կատեգորեաների ընտրողները. 1) 35 տարեկան հասած ամուսնացած կամ այրի տղամարդիկ, որոնք ունեն օրինական զաւակներ և տալիս են առնըւազն 5 ֆրանկ հարկ. 2) 25 տարեկան տղամարդիկ, որոնք ունեն առնուազն 2,000 ֆրանկ արժէք ունեցող կալուածք։ Վերոյիշեալ երկու պահանջներին գոհացում տուողներն ուրեմն կունենան երկու ձայն։ Աւելորդ երկու ձայնի իրաւունք ունին 1) բարձրագոյն կամ բարձր կարգի միջնակարգ ուսումնարան աւարտածները և 2) որոնք վարում են յիշեալ ուսմանը համապատասխան պաշտօն։ Սակայն յամենայն դէպս ոչ ոք չէ կարող երեք ձայնից աւելի իրաւունք ունենալ։

Այդ սիստեմի դէմ են կռուում սոցիալիստները։ Դրժգոհութիւնը այդ սիստեմի դէմ քանի գնում մեծանում է։ 1902-ին առաջարկ եղաւ վերացնել այն, սակայն ձայների սակաւ առաւելութեամբ մերժուեց հաւասար ընտրողական իրաւունքները։

Մօտիկ ապագայում անտարակոյս կտապալուի արտօնեալներին միայն ձեռնտու այդ սիստեմը։

Գերմանիայի դաշնակցական խորհուրդում էլ (Bundeesrath) 17 պետութիւններ ունեն մէկ—մէկ ձայն. մէկը միայն՝ 17 ձայն իսկ մնացածը 2—6 ձայն։

Ցայտնի է, որ վերջին տարում, յատկապէս ռուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ, Աւստրիայում ահագին շարժում առաջ եկաւ յօգուտ ընդհանուր ընտրողական իրաւունքի, որի գլխաւոր պահանջ դնողը այնտեղի բանուորական դասակարգն էր, որին և համակերպուեց կառավարութիւնը։ Իսկ ինչպիսի ընտ-

րողական իրաւունք էր այնտեղ իշխողը։ Բոլոր ընտրողները այնտեղ բաժանուում էին 5 կարգի, որոնք և կոչւում են կուրիաներ. 1) խոշոր կալուածատէրեր, 2) քաղաքային համայնքներ 3) առևտրականներ և արհեստաւորներ, 4) գիւղական համայնքներ։ Այս չորս կուրիաների վրայ 1896 թուականից աւելացել է և մի 5-րորդը, որ հիմնուած է ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ։ Առաջին չորս կուրիաները միասին ընտրում են 353 դեպուտատ, իսկ 5-րդ մենակ 72։

Այս նշանակում է, որ 5-րդ կուրիայում 1 դեպուտատ է ընկնում 70,000 ընտրողի վրայ, իսկ 2-րդում՝ 1 դեպուտատ միմիայն 26 ընտրողի վրայ. ուրիշ խօսքով արտօնեալ 2-րդ դասի 26 ընտրողների ձայնը հաւասար է 5-րդ դասի 70,000 ընտրողների ձայնին, կամ՝ 1 ձայնը մէկ դէպքում=2700 ձայնին ուրիշ դէպքում։ Պարզ է ուրեմն այստեղ ընտրող. իրաւունքի անհաւասարութիւնը. 5-րդ կուրիայի ընտրողները, որի մէջ մասնակցում են 5,000,000 ընտրողներ՝ ժողովրդական լայն խաւերից՝ ուղարկում են պարլամենտ բոլոր դեպուտատների միայն 17%։ Այս անյատակ անհաւասարութիւնը միանգամայն իդերև է հանում ընդհանուր ընտրողական սկզբունքը։

Այսպիսով ստանում ենք հետևեալ ցանկը.

Կուրիա	ընտրողների թիւ	դեպուտատների թիւ	մի քան ընտրողի վրայ է ընկնում 1 դեպ՝
1) Խոշոր կալուածատէրէր	5,431	85	64
2) Առևտրականներ	556	21	26
3) Քաղաքներ	493.804	118	4,193
4) Գիւղ. համայնքներ	1.585,466	129	12,290
5) Ընդհանուր	5,044,222	72	69,563

Այն բոլոր ընտրողները, որոնք, իրենց ցենզի համաձայն, իրաւունք ունեն առաջին չորս կարգերից մէկում ձայն տալու, այդ իրաւունքը ունեն նաև 5-րդ կարգում Այդպիսով ուրեմն ժամանակ մի ընտրող կարող է միևնոյն ընտրութիւնների երկու ձայնի իրաւուն ունենալ։

Աւստրիային յատուկ այս ընտրողական սիստեմը ցոյց է տալիս այն, որ մի կողմից կառավարութիւնը ստիպուած էեղել զիջել դեմոկրատական պահանջների առաջ, միւս կողմից էլ չէ կամեցել քանդել աւստրիական ընտրողական իրաւունքի հիմք ծառայող դասակարգային ներկայացուցչութիւնը։ «Այսպիսով,—ասում է Jellinek—(եր 11.), աւստրիական դեպուտատների պալատը նմանում է երկու տարբեր կտորից կարուած զգեստի»։

Գրուսիայի լանդտագի համար գոյութիւն ունեցող երեքդասեան ընտրող. սիստեմն էլ ինչպէս տեսանք, պարունակում է իւր մէջ ոչ միայն ցենզային արտօնութիւն, այլ նաև հանդիսանում է իբրև մի տեսակ պլուրալսիստեմ։

Հաւասար ձայնաւորութեան սկզբունքը կխանգարուի նաև այն ժամանակ, երբ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք տրուի իրաւաբանական մարմիններին, այսինքն այն բոլոր հաստատութիւններին, ընկերութիւններին և միութիւններին, որոնք ունեն հաստատուած կանոնադրութիւն և սեփականութիւն։ Դրա հետևանքը այն կլինի որ հարուստ մարդիկ, որոնք այս կամ այն տեղ շատ ակցիաներ ունեն, կամ արդիւնաբերողներ են և այլն, դրան ք բոլորը չեն ունենայ միայն մէկ-մէկ ձայն, ինչպէս աշխատաւորները, այլ երկու, երեք և ա-

ւելի ձայն։ Դրանով էլ, ուրեմն, խախտուած կլինի հաւասար ընտրութեան սկզբունքը։

Եթէ մի երկրում գոյութիւն ունենայ նոյնիսկ ընդհանուր և հաւասար—թէկուզ հէնց ուղղակի և գաղտնի ձայնաւորութեամբ—ընտրողական իրաւունք, այդ դէպքում ևս կարող է խախտուել հաւասար ընտրութեան սկզբունքը ուրիշ եղանակով։ Ահա թէ ինչպէս։

Մեր խօսքը այսպէս կոչուած, ինչպէս Բիսմարկն է անուանել, ընտրողական աշխարհագրութեան մասին է. այսինքն, երբ ամբողջ երկիրը բաժանուում է որոշ թիւ ընտրողական շրջանների, սակայն մի շրջան կարող է ունենալ աւելի թուով ազգաբնակութիւն (ասենք օր. 150,000), իսկ մի ուրիշը պակաս (օր. 85,000)։ Ակներև է, որ այս դէպքում էլ խախտւում է հաւասար ընտրողական իրաւունքի սկզբունքը։

Ուրեմն, անհաւասար ընտրողութեան առաջն առնելու համար անհրաժեշտ է, որ երկիրը բաժանուի հաւասար թուով բնակիչներ ունեցող ընտր. շրջանների։ Այս բաւական չէ. հարկաւոր է մի քանի տարէն մի անգամ,—ամենալաւը՝ ժողովրդագրութիւնից անմիջապէս յետոյ՝ (ինչպէս որ է Ֆրանսիայում)—նորից բաժանել երկիրը ընտր. շրջանների, էլի ազգաբնակութեան թուի համաձայն. չէ՞ որ մի շրջանի բնակիչների թիւը որոշ ժամանակում կարող է բազմանալ, իսկ մի ուրիշինը՝ նուազել։ Միանգամ ընդմիշտ, դեմոկրատական տեսակէտով, պարզ և ընդունելի պիտի լինի այն սկզբունքը, որ հաւասար թուով ընտրողներ միայն կարող են մի պատգամաւոր ուղարկել պարլամենտ։

Գերմանիայում, օրինակ, երկիրն ընտրողական շրջանների է բաժանուել սրանից դեռ 35 տարի առաջ. այդ

բաժանումը մնացել է հաստատ մինչև օրս։ Սրա հետևանքն այն է, որ 35 տարի առաջ շատ ընտր. շրջաններում, ուր կար 100,000 բնակիչ—այժմ կայ հազիւ 40—50,0000, և կան այնպիսի շրջաններ, ուր այդքան տարիների ընթացքում ազգաբնակութեան թիւը հասել է 150—300,000—ի։ Պատճառն էլ պարզ է. գիւղը քանի գնում դատարկւում է, իսկ քաղաքը՝ մեծանում։ Առաջ են եկել խոշոր արդիւնագործական կենտրոններ, որոնց ազգաբնակութեան ամենախոշոր մասը բանուորներ են։ Դուրս է գալիս ուրեմն, որ արդիւնագործական կենտրոնների 300,000 ընտրողներն էլ պիտի պարլամենտ ուղարկեն մէկ պատգամաւոր, գիւղական 50,000-ն էլ մէկ պատգամաւոր։ Այս բաւական չէ. «ընտրողական աշխարհագրութեան» միջոցով կառավարութիւնը մեծ քաղաքների արուարձանները, ուր ապրում են դեմոկրատական տարրեր, փոխանակ միացնելու քաղաքի ընտրողական շրջանին, միացնում է շրջակայ գիւղական ազգաբնակութեան շրջանին, և, այդպիսով, այդ շրջանում փոքրամասնութիւն կազմող դեմոկրատ բանուորների ձայնը խեղդւում է աւելի բազմաթիւ, բայց պահպանողական գիւղական ընտրողների մէջ։

Դեռ այն էլ կայ, որ Գերմանիայի, այժմ էլ գոյութիւն պահպանող, ընտրողական շրջանները կազմուել են 1871-ին, երբ Գերմանիան ունէր 39,70,0000 բնակիչ և ըստ այդմ ուղարկւում է 397 ներկայացուցիչ, մինչ այժմ Գերմանիայի բնակիչների թիւը հասել է57000,000-ի, իսկ ներկայացուցիչների թիւը մնացել է էլի նոյնը։

Դրանից կրկին տուժում է պրոլետարիատը։

Պարզ է, որ այս դէպքում զգալի կերպով խախտւում է հաւասար ընտրութեան սկզբունքը։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիան կռիւ է մղում այդ անարդարութեան դէմ՝ քանի որ տուժում է այստեղ բանուորութիւնը, մինչ գիւղական աւելի անգիտակից և խաւար մասսաների վրայ յենուող կուսակցութիւններին ձեռնտու է հին բաժանումը։ Այդպիսի բաժանման շնորհիւ է միայն, որ ռայխստագի վերջին ընտրութիւնների ժամանակ աւելի քան 3 միլիոն սոցիալ-դեմոկրատ ընտրողներ ռայխստագ ուղարկեցին 81 ներկայացուցիչ, այն ինչ 2 միլլիոնից էլ պակաս ձայն ունեցող կենտրոնի կուսակցութիւնը ուղարկեց 100 պատգամաւոր։ Անհաւասարութիւնն ակներև է։

Սովորաբար մոռացութեան է տրւում դեմոկրատիական ընտրութիւնների մի ուրիշ կողմը, որ շատ կարևոր է։ Խօսքս պրոպորցիոնալ ընտրութիւնների մասին է, որը սակայն դեռ կիրառութեան մէջ չէ մտել պետութիւններից մեծ մասում և որի մեծ նշանակութիւնն էլ ակներև է։

Եթէ մի տեղ ընտրութիւնները կատարւում են ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ֆորմուլայով, եթէ ընտրական շրջաններն էլ հաւասար թուով ազգաբնակութիւն ունեն, այդ դէպքում ևս կխախտուի դեմոկրատիական ընտրութիւնների սկզբունքը, եթէ այնտեղ մաժորիտար (ըստ մեծամասնութեան) ձայնատուութիւն գոյութիւն ունի, այսինքն՝ երբ ընտրողների սոսկ մեծամասնութեան թեկնածուներն են համարւում ընտրուած։

Մաժորիտար ընտրութիւններն էլ կարող են կատարուել երկու կերպ։ Եթէ օրինակ պարլամենտ պիտի ուղարկել 100 պատգամաւոր, երկիրը կարելի է բաժանել ա) 100, հաւասար ազգաբնակութիւն ունեցող, ընտր.

շրջանների, որոնցից իւրաքանչիւրը կուղարկի մէկ պատգամաւոր, և բ) աւելի սակաւաթիւ, բայց անհաւասար ընտր. շրջանների (օրինակ. 5—2), որոնցից մէկը կուղարկի 10, միւսը 15, երրորդը աւելի թուով պատգամաւորներ, նայած ազգաբնակութեան համեմատական բազմութեան։ Առաջին դէպքում ընտրողը ամբողջ շրջանի համար ձայն պիտի տայ միայն մէկ թեկնածուի. այդ պատճառով էլ այդ ձայնտուութիւնը կոչւում է միանուանական կամ շրջանային (Einerwahl, scrutin uninominal կամ scrutin d'arrondissemen, одноименные выборы)։ Երկրորդ դէպքում մի ընտր. շրջանի ամեն մի ընտրող ձայն պիտի տայ մի շարք թեկնածուների, որքան պատգամաւոր որ պարլամենտ պիտի ուղարկի, այդ պատճառով էլ այդ ընտրութիւնները կոչւում են ընտրութիւններ ըստ ցուցակների (Listenvahl, scrutin de liste, выборы по спискамъ)։ Առաջին տեսակի ընտրութեան բաժանումը գոյութիւն ունի համարեա բոլոր մեծ պետութիւններում, ուր չէ մուծուած պրոպորցիոնալ ընտրութիւնը, երկրորդ տեսակի բաժանումն արդէն մացրուած է մի քանի մանր պետութիւններում—Բելգիա, Սերբիա, Դանիա և Շվէյցարիայի մի քանի կանտոններում։ Երկու դէպքում էլ ընտրուած է համարւում այն թեկնածուն, որ ստացել է՝ առաջին ընտրութեան ժամանակ ընտրութեան մասնակցողների կէսից աւելի ձայնը, կրկնաքուէարկութեան ժամանակ՝ ձայների համեմատական առաւելութիւն։ Ուրեմն՝ «ձայն բազմացի» սկզբունքը կատարւում է այդ ընտրութիւններին, որոնք և կոչւում են մաժորիտար։ Պարզ է ուրեմն և այն, որ փոքրամասնութեան ձայնը միանգամայն կորչում է այդօրինակ ընտրութիւնների ժամանակ։

Օրինակներով խօսենք։ Ասենք թէ մի ընտրական շրջանում, ուր պիտի ընտրել մէկ պատգամաւոր, ձայն պիտի տան 1000 ընտրողներ։ Ասենք թէ նաև դրանք բոլորը պատկանում են երկու կուսակցութեան՝ 600 հոգի պահպանողական են, 400 հոգի լիբերալ։ Իւրաքանչիւր կուսակցութիւն կը դնի իր թեկնածուն։ Պարզ է, որ յիշեալ դէպքում կընտրուի պահպանողական թեկնածուն, քանի որ նա կստանայ ձայների բազմութիւն (600 ձայն), իսկ լիբերալների թեկնածուն կսևանայ. նրա ստացած 400 ձայնը գրոշի նշանակութիւն չի ունենայ։

Մենք ցոյց տուինք մաժորիտար ընտրութիւնների անյարմարութիւնը. այդ էլ՝ ուր երկու կուսակցութիւն գոյութիւն ունի. իսկ եթէ նոյն ընտր. շրջանում 3—4 կուսակցութիւններ կան՝ աւելի տգեղ հետևանք կարող է ստացուել։ Մի կուսակցութիւն կարող է ունենալ 350 ձայն, երկրորդը 300, երրորդը 200, չորրորդը 150։ Ամեն մէկը կը դնի իր թեկնածուն։ Այդպիսով ուրեմն՝ այդ շրջանում ընտրուած պատգամաւորը կը հանդիսանայ փոքրամասնութեան ներկայացուցիչ, և մեծամասնութեան ձայնը այս դէպքում կմնայ առանց որ և է նշանակութեան։ Նմանապէս, երբ ընտրութիւնը լինում է ոչ թէ միանուանական, այլ ըստ ցուցակների. այդ դէպքում էլ նոյն հետևանքը կարող է ստացուել։ Ասենք. թէ մի շրջանում հարկաւոր է ընտրել 10 հոգու. ընտրում են 2000 հոգի, որոնցից 1001-ը մի կուսակցութեան է պատկանում, 999-ը ուրիշ. 1001 հոգին էլ բոլորը ձայն կը տան բոլոր իրենց 10 թեկնածուներին, իսկ 999-ի 10 թեկնածուները կը սևանան։

Ուրիշ օրինակ.

Ասենք թէ մի երկրի բոլոր ընտրողների ընդհանուր թիւն է 50,000, որոնք 50 ընտրողական շրջանում պիտի ընտրեն 50 ներկայացուցիչ։ Ասենք նաև, թէ այդ երկրում կայ երկու կուսակցութիւն՝ A և B։ Ընդունենք թէ A կուսակցութիւնը 20 ընտրողական շրջաններում ունի 900-ական ձայն, իսկ B. ն 100-ական ձայն. մնացած 30 ընտրողական շրջաններում, ընդհակառակը, A-ն ունի 400-ական ձայն, իսկ B-ն 600-ական։ Այսպէս ուրեմն՝ մաժորիտար ընտրութեան դէպքում A կուսակցութիւնը պարլամենտում կունենայ 20 ներկայացուցիչ միայն, իսկ B-ն՝ 30 ներկայացուցիչ։ Ուրեմն՝ A կուսակցութեանը տրուել է 20×900=18,000 և 30×400= 12,000 և ընդամենը 30,000 ձայն. իսկ B կուսակցութեանը տրուել է 20×100=2000 և 30×600=18,000 և ընդամենը 20,000 ձայն։ Այսպիսով կըստացուի մի տրամաբանական անհեթեթութիւն։ Փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւնը (B, 20,000 ձայնով), պարլամենտում կունենայ աւելի թուով ներկայացուցիչներ (30), քան մեծամասնութեան կուսակցութիւնը (A, 30,000 ձայնով), որ կունենայ միմիայն 20 ներկայացուցիչ։

Առաջ ենք բերում հետևեալ ցուցակը *), որ ցոյց է տալիս 1890-ի ընտրութիւնների հետևանքը Բադէնում։

Կուսակցութիւններ	Ձայների թիւը	Ներկայացուցիչների թիւը
Նացիոնալ-լիբերալ	82,269	—
Կենտրոնի կուսակ.	80,726	8
Ազատամիտներ և դեմոկրատներ	40,223	2

*) Георгъ Мейеръ, изб. право. 175.

Սոցիալ-դեմոկրատներ	29,309	1
Պահպանողական	17,836	2
«Վայրենիներ» (անկուսակ.)	8,444	1
Ընդամենը	258,804	14

Այս ցուցակից պարզ երևում է, որ երկրի ամենազօրեղ կուսակցութիւնը՝ նացիոնալ-լիբերալները, որոնք ստացել են բոլոր ձայների 1/-3ը, չեն կարողացել ընտրել և ոչ մի ներկայացուցիչ. մինչ այդ կուսակցութիւնից աւելի պակաս ձայն ստացող կենտրոնը ընտրել է 8 ներկայացուցիչ։ Նոյն նացիոնալ-լիբերալների կուսակցութիւնը 1897 թ. ընտրութիւնների ժամանակ ստանալով բոլոր ընտրողների կէսից պակաս ձայն (275,247-ից 121,831 ձ.) ընտրել էր ընդամենը 14 ներկայացուցիչներից 9 հոգի իր կուսակցութեան մարդիկ։

Թէ յիրաւի մաժորիտար ընտրութիւնները չեն կարող իսկական ժողովրդական «ներկայացուցչութեան» պատկերը տալ, այդ երևում է նաև հետևեալ փաստերից տեղեկութիւններից *)։ Ֆրանսիայում 1881 թուականից մինչև 1902-ը տեղի ունեցած ընտրութիւնները տալիս են հետևեալ պատկերը.

Թուական	Ներկայացուցիչների ստացած ձայների թիւը	Ներկայացուցիչ չուղարկած ձայների թիւը
1881	4,776,000	5,600,000
1885	3,042,000	6,000,000
1889	4,526,000	5,800,000
1893	4,513,000	5,930,000
1898	4,906,000	5,633,000
1902	5,159,000	5,818,000

*) Государств. строй и. т. д. եր. 303.

Այս թուերից պարզւում է, որ բոլոր ընտրութիւնների ժամանակ էլ ձայների կէսից աւելին չէ ունեցել ներկայացուցչութիւն, իսկ 1885-ի ընտրութիւնների ժամանակ՝ մինչև իսկ բոլոր ընտրողների $^2/_3$-ը։ Իրողութիւնը ուրեմն այն է, որ երկիրը կառավարում են փոքրամասնութեան ներկայացուցիչներ։

Քանի որ մաժորիտար ընտրութիւնների միջոցով չէ կարող արտայայտուել ամբողջ, կամ համարեա ամբողջ ժողովրդի կամքը, այդ պատճառով էլ դեմոկրատիական ընտրութիւնների կողմնակիցները ջանքեր են թափել և սիստեմներ մշակել՝ ազգաբնակութեան փոքրամասնութեան շահերը ընտրութիւնների ժամանակ վնասած չը լինելու համար։

Երկու տեսակ միջոց է առաջարկուել այդ նպատակին հասնելու համար—փոքրամասնութեան ներկայացուցչութիւն և պրոպորցիոնալ ընտրութիւն։ Ակնյայտ է դրա կարևորութիւնը այնպիսի երկրներում, ուր գոյութիւն ունեն մի քանի կուսակցութիւններ և կամ ուր ապրում են մի քանի ազգութիւններ։ Եթէ ընդունէինք մաժորիտար ընտրութիւնների սկզբունքը, այդ դէպքում պիտի փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւնները և մանր ազգութիւններն անտես առնուէին, ինչպէս որ յիրաւի այդպէս էլ լինում է։ Կովկասի նման մի երկիր, ուր ապրում են շատ մանր ազգութիւններ, շահագրգռուած է փոքրամասնութեան շահերի պաշտպանութիւնը երաշխաւորող ընտրութեան ներմուծմամբ, որը իր տեղին երբեմն աւելի կարևոր նշանակութիւն ունի, քան ուղղակի կամ գաղտնի ձայնաւորութիւնը։

Պրոպորցիոնալ ընտրութեան կողմնակից են Եւրոպայում նաև մեծամասնութիւն կազմող կուսակցութիւն-

ները. նախ նրա բուն դեմոկրատիական ոգին ի նկատի ունենալով, և երկրորդ այն, որ ուրիշ սահմանափակումների (պլուրալիստեմ, անուղղակի ձայնաւորութիւն, և այլն) շնորհիւ վնասւում են մեծամասնութեան շահերը և պաշտպանւում փոքրամասնութիւն կազմող արտօնեալների շահերը։ Այդ է պատճառը, որ վերջինները մեծ մասամբ հակառակ են պրոպորցիոնալ ընտրութիւններին։

Նախ տեսնենք, թէ ինչ պէտք է հասկանալ փոքրամասնութեան ներկայացուցչութիւն ասելով, որն էլ իւր կարգին երկու եղանակով կարող է իրագործուել—անկատար վոտում (vote limité) և հաւաքական վոտում (vote cumulatif)։ Անկատար վոտումի էութիւնն այն է, որ այն ընտրողական շրջաններում, որտեղ պիտի ընտրուեն մի քանի ներկայացուցիչներ, ամեն մի ընտրողի իրաւունք է տրւում իր ձայնը տալու ոչ թէ բոլոր, այլ միայն մի քանի թեկնածուների (օր. 5-ից 3 հոգու)։ Այսպիսով էլ փոքրամասնութեանը հնարաւորութիւն է տրւում անցկացնելու իր, թէև սակաւաթիւ, թեկնածուներին։

Հաւաքական վոտումի էութիւնը հետևեալն է։ Դիցուք մի ընտրական շրջանում հարկաւոր է ընտրել 10 դեպուտատ։ Ամեն մի ընտրող իրաւունք ունի այնքան ձայն տալու, որքան որ դեպուտատներ պիտի ընտրուեն. յիշած դէպքում ընտրողին իրաւունք է տրւում այդ 10 ձայնն էլ տալու թէկուզ միայն մէկ թեկնածուի։

Տեսնում ենք՝ յիշած ընտրողական եղանակը խիստ միտումաւոր է և ձգտում է հարցը ոչ թէ սկզբունքով լուծելու, այլ արուեստական ճանապարհով դիւրութիւն տալու

փոքրամասնութեանը կամ նոյն եղանակով թուլացնելու մեծամասնութիւնը։

Բոլորովին ուրիշ սկզբունքային ելակէտ ունի պրոպորցիոնալ ռիստեմը։ Նա աշխատում է պարլամենտում համեմատական կերպով ներկայացնել տալ դեպուտատներին ընտրող կուսակցութիւնները։ Պրոպորցիոնալ ընտրութիւնների կողմնակիցներն այն հիմնաւոր համոզմունքն ունեն իրենց ելակէտ, թէ պարլամենտական ներկայացուցիչները պէտք է արտայայտիչ հանդիսանան նրանց ընտրողների կարծիքի. ըստ այսմ էլ, ասում է Ջ. Ստ. Միլլ, ամենալաւ դեպուտատը նա կարող է լինել, որն ամենից լաւ արտայայտիչ լինել կարող է իր ընտրողների։ Ոմանք յայտնում են նոյն իսկ այն կարծիքը, թէ ներկայացուցիչները իրենց ընտրողների սոսկ լիազօրներն են, հետևապէս, նրանք ըստ կարելոյն ճշգրիտ կերպով պարտաւոր են արտայայտել պարլամենտում իրենց ընտրողների կարծիքները։ Միրաբոն ասել է. «Պարլամենտի ներկայացուցիչները ժողովրդի վերաբերմամբ պիտի լինեն այն, ինչ աշխարհագրական քարտէսը՝ երկրի իսկական աշխարհագրական դիրքի վերաբերմամբ»։

Դեմոկրատիական պետութեան գաղափարը նաև պահանջում է պրոպորցիոնալ ընտրութեան ներմուծումը։ Պէտք է աշխատել, որքան հնարաւոր է, զուտ ժողովրդապետութեան սկզբունքը որոշ չափով իրագործելի դարձնել նաև ներկայացուցչական ժողովում, ուստի և, այդ ընտրեալ ներկայացուցիչները պէտք է արտայայտիչ լինեն ժողովրդական կամքի։ Պրոպորցիոնալ ընտրութիւնները էլ հանդիսանում են իբրև մի միջոց այն բանի, որ զանազան կուսակցութիւններ, թէկուզ սակաւաթիւ հետևողներով, հնարաւորութիւն ունենան մասնակցելու ժո-

ղովրդական ներկայացուցչութեան մէջ։ Ուրեմն՝ այդպիսով պաշտպանւում են միաժամանակ և փոքրամասնութեան շահերը։ Պրոպորցիոնալ ընտրութեան նշանաբանն է՝ «փոքրամասնութիւնը կշռադատում է, մեծամասնութիւնը վճռում»։ Բացի կուսակցութիւնների ներկայացուցչութիւն լինելուց՝ պարլամենտը հանդիսանում է նաև երկրամասերի և ազգութիւնների ներկայացուցչութիւն։ Ամեն մի երկրամաս, նահանգ կամ գաւառ ունի իր առանձնայատուկ, իքնուրոյն շահերը, որոնք պաշտպանութիւն պիտի գտնեն ժողովրդական ներկայացուցչութեան մէջ։ Նմանապէս առանձին առանձին ազգութիւններ ունեն իրենց սեփական շահերը։ Պրոպորցիոնալ ընտրութիւնները, փոքրամասնութեան շահերը պաշտպանելով, այդպիսով նաև գոհացում են տալու այդ պահանջներին։

Գործնական կեանքում ինչպէս պիտի իրականացնել պրոպորցիոնալ ընտրութեան սկզբունքը։ Ասենք թէ մի ընտրողական շրջանից պարլամենտ պիտի ուղարկել 10 ներկայացուցիչ. ընտրողների թիւն է 1000։ Մաժորիտար ընտրութիւնների ժամանակ ընտրուած է համարւում նա, որ ստացել է կէսից աւելի ձայն, յիշած օրինակում՝ 501 ձայն. և եթէ մի կուսակցութիւն կէսից աւելի (թէկուզ միայն 501) ձայն ունի իր կողմը, 10 հոգին էլ իր մարդիկ կընտրէ, իսկ 499-ի ընտրելիները կսևանան։

Այլ է պրոպորցիոնալ ընտրութեան սկզբունքը, որ տարբեր կուսակցութիւններ նաև փոքրամասնութիւնը կամենում է ներկայացնել։ Վերցնենք նոյն օրինակը։ 1000 ընտրող կայ և 10 ընտրելի։ Եթէ 600 հոգի մի կուսակցութեան են պատկանում, 400 մի ուրիշ, այդ դէպքում առաջին կուսակցութիւնը, իր միջից ընտրում է 6 հո-

գու, միւս կուսակցութիւնը՝ 4 ներկայացուցիչ։ Այսպիսով, ուրեմն, կուսակցութիւնները ներկայացուցիչներ են ուղարկում իրենց համեմատական (պրոպորցիոնալ) թուի համաձայն։ Այդ պատճառով էլ հէնց ընտրութեան այդ սիստեմը կոչւում է պրոպորցիոնալ։

Այսպէս էլ կարելի է անել։ 1000 հոգու միջից պիտի ընտրել 10 հոգի։ Ժողովի նախագահը կանչում է մէկ-մէկ ընտրողներին և դնում նախ ասենք, պահպանողականների թեկնածուների տուփերը—Ա. Բ. Գ. և այլն։ Հէնց որ Ա.-ն ստանում է 100 ձայն, նա համարւում է արդէն ընտրուած. ուստի և, նոյն կուսակցութեան համախոհները, ձայնը չը կորցնելու համար, այլևս իրենց ձայնը չեն տալիս Ա.-ին, այլ Բ.-ին և այլն։ Այդպիսով ուրեմն, ամեն մի ընտրելի, հէնց որ ստանում է 100 ձայն, համարւում է ընտրուած։ Ուրեմն՝ եթէ 600 պահպանողական են և 400 լիբերալ, կընտրուեն 6 հոգի առաջիններից, 4 հոգի վերջիններից։

Բայց բանն այն է, որ գործնական կեանքում այդպիսի «կլոր» թուով ձայներ չեն տրւում. կարող են ձայները այսպէս բաժանուել—650 պահպանողականների կողմը, 350 լիբերալների կողմը։ Աւելի է բարդւում հարցը, երբ «չ թէ երկու, այլ 3—4—5—6 կուսակցութիւն կայ մի ընտրական շրջանում։ Այդ դէպքում ձայները կարող են այսպէս բաժանել, 335 պահպանողական, 280 լիբերալ, 185 բաղիկալ, 175 սոցիալիստ, 70 ֆեդերալիստ և 35 անկուսակցական։ Եւ եթէ ընտրուած պիտի համարուեն 1000:10=100 ձայն ստացող ընտրելիները միայն, ապա ուրեմն՝ յիշած դէպքում ընտրուած պիտի համարել 3 պահպանողական, 2 լիբերալ, 1 բաղիկալ և 1 սոցիալիստ։ Ֆեդերալիստների և անկուսակցականների

թեկնածուները, ստացած չը լինելով պահանջուած թուով ձայներ, չեն համարւում ընտրուած. բայց չէ՞ որ հարկաւոր է ոչ թէ 7, այլ 10 հոգու ընտրել։ Մնացած 3 ներկայացուցիչը ո՞ր կուսակցութեան մարդ պիտի լինի։ Այստեղ է ահա դժուարութիւնը։

Այս դժուարութիւնը վերացնելու համար զբաղուել են շատ մարդիկ, առաջարկուել են բազմատեսակ միջոցներ։ Այդ բոլորից ամենաընդունելին բելգիացի իրաւագէտ Վիկտոր դ'Օնդտի առաջարկութիւնն է, որի էութիւնը կայանում է հետևեալում։

Վերցնենք վերի թուերը։ Ասենք թէ 10 ներկայացուցիչ ընտրող 1000 ձայնը բաժանւում է այսպէս.

415 պահպանողականներ
284 լիբերալներ
180 ֆեդերալիստներ
121 սոցիալիստներ

Այդ բոլոր ձայներից իւրաքանչիւրը վերցնենք և բաժանենք 2-ի, 3-ի, 4-ի վրայ և այլն. կը ստանանք որ

415:2=207:3=138:4=103.
284:2=142:3=94 :4=71.
180:2=90 :3=60 :4=45.
121:2=60 :3=40 :4=30.

Ստացուած բոլոր թուերը մենք կը վերցնենք կարգով, սկսած ամենամեծից, մինչև որ լրանայ 10 դեպուտատի թիւը։ Այսպիսով՝ 1-ին տեղը կը պատկանի պահպանողականներին, 2-ը լիբերալներին, 3-րդը կրկին՝ պահպանողականներին, 4-րդը ֆեդերալիստներին, 5-րդը կրկին լիբերալներին, 6-րդը կրկին պահպանողականներին, 7-րդը սոցիալիստներին, 8-րդը կրկին պահպանո-

ղականներին, 9-րդը կրկին լիբերալներին, 10-րդը կրկին ֆեդերալիստներին։

Ուրեմն կը ստացուեն այսպիսի թուեր.

415 պահպանողականներ	4 ներկայացուցիչ
284 լիբերալներ	3 ներկայացուցիչ
180 ֆեդերալիստներ	2 ներկայացուցիչ
121 սոցիալիստներ	1 ներկայացուցիչ
1000 ընտրողներ	10 ներկայացուցիչ

Տեսնում ենք, պրոպորցիոնալ ընտրութիւնները այնքան էլ «անսովոր բարդութիւններ» չունեն և ոչ էլ նրանց հասկանալու համար կարևոր են «մաթեմատիքական տրակտատներ»,—ինչպէս որ կարծում են այդ ընտրութիւնների հակառակորդները։ Ընդհակառակը ակներև են այդ սիստեմի առաւելութիւնները։ Բացի այն, որ այդպիսով ամեն մի կուսակցութիւն համեմատական չափով հնարաւորութիւն է ստանում ներկայացուցիչներ ունենալու այդ սիստեմը տալիս է և հետևեալ արդիւնքները.

1. Կուսակցական կազմերի մէջ եղած տատանումները բուլանում են։ Մաժորիտար ընտրութիւնների ժամանակ շատ անգամ սակաւաթիւ ձայների շնորհիւ յանկարծ կարող է մի կուսակցութիւն մի քանի ներկայացուցիչ աւելի կամ պակաս ուղարկել. այս դէպքում յայտնի են արդէն մի կուսակցութեան ձայների թիւը, և նա արդէն այդ ձայների համեմատական չափով միայն ներկայացուցիչ ունենալ կարող է, ոչ աւելի և ոչ էլ պակաս։

2. Պարզ է նաև վերոյիշեալից, որ պրոպորցիոնալ ընտրութիւնները մեղմացնում են կուսակցութիւնների պայքարը ընտրութիւնների ժամանակ։

3. Վերացնում են շատ անգամ իրար հակառակորդ համարող կուսակցութիւնների մէջ կայացող համաձայնութիւնները՝ ընտրութիւնների ժամանակ։

4. Վերանում են նաև այն դժուարութիւնները, որոնք կապուած են ընտրողական շրջանների հետ։ Ամենալաւն այն կը լինէր, ի հարկէ, եթէ ամբողջ երկիրը համարուէր մէկ ընտրողական շրջան։

Շուէյցարիայում, Բելգիայում և ուրիշ երկրներում արդէն ընդունուած է պրոպորցիոնալ ընտրութիւնների սիստեմը, որն և տալիս է յաջող հետևանքներ։

Ուրեմն՝ դեմոկրատիզմի կողմնակիցները պիտի պահանջեն նաև՝ պրոպորցիոնալ ընտրութիւններ։

V. ՈՒՂՂԱԿԻ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՁԱՅՆՏԻՈՒԹԻՒՆ

Դեմոկրատական ընտրութիւնները բացի ընդհանուր, հաւասար և պրոպորցիոնալ լինելուց պիտի լինեն անպատճառ նաև ուղղակի և գաղտնի։

Մենք երբէք աչքաթող չպիտի անենք մի հանգամանք—իսկական ժողովրդապետութեան սկզբունքը։ Եթէ անհնար է իրագործել անմիջական ժողովրդապետութիւնը, ապա ուրեմն ներկայացուցչական սիստեմը այնպիսի պայմանների մէջ պիտի դնել, որ ներկայացուցիչները յիրաւի հանդիսանան ժողովրդական կամքի արտայայտիչներ։

Այս տեսակէտից նայելով ընտրութիւնների վրայ, մենք անպատճառ պիտի պահանջենք, որ նրանք լինեն ուղղակի։ Այս ասելով մենք հասկանում ենք ձայնաւորութեան այն եղանակը, երբ ընտրողները իրենց քուէն անմիջապէս, ուղղակի տալիս են նրան, ում նրանք ցանկանում են ընտրուած տեսնել։ Ժողովուրդը ինքը ան-

միջապէս ընտրում է իւր ներկայացուցիչներին։

Սակայն այդպէս չէ լինում միշտ։ Յաճախ ընտրութիւնները լինում են անուղղակի ձայնատուութեամբ, այսինքն ընտրող ազգաբնակութիւնը իւր միջից ընտրում է որոշ թուով լիազօրներ (выборщики) որոնք արդէն, իրենց կողմից, ընտրում են ներկայացուցիչ. այս դէպքում ուրեմն ընտրութիւնները կատարւում են երկաստիճան կարգով։

Բայց պատահում է, որ ընտրութիւնները լինում են ոչ թէ երկաստիճան, այլ եռաստիճան, նոյն իսկ քառաստիճան, մի խօսքով՝ բազմաստիճան կարգով, այսինքն՝ ընտրող ազգաբնակութիւնը ընտրում է պատուիրակներ, սրանք էլ իրենց կողմից ընտրում են լիազօրներ, և այլն, որոնք և իրենց կողմից ընտրում են ներկայացուցիչ։

Միանգամայն ակներև են ուղղակի ձայնատուութեան առաւելութիւնները դեմոկրատիզմի տեսակէտից։ Երբ ժողովուրդը անմիջապէս ընտրում է իւր դեպուտատին, այդ դէպքում պահպանւում է սերտ կապ այդ երկուսի մէջ. ժողովուրդը գիտէ, թէ ով է իւր ներկայացուցիչը՝ վերջինս էլ գիտէ, թէ ովքեր են իւր ընտրողները։ Սրանք հնարաւորութիւն ունեն միշտ հետևելու իրենց ընտրեալի գործունէութեան, քննադատաբար վերաբերուելու նրան. սրանք կտեսնեն, թէ իրենց ներկայացուցիչը յիրաւի արտայայտիչ է իրենց՝ ընտրողների քաղաքական-սոցիալական հայեացքների. չրագիրը ամենալաւ սուրհանդակն է այդ բանի համար։

Պարլամենտական նստաշրջանը վերջանալուց յետոյ դեպուտատը գնում է իւր ընտրական շրջանը, խօսում, խորհրդակցում է իւր ընտրողների հետ, ստանում է նրանցից որոշ մանդատներ. այդպիսով՝ ստեղծւում և պահւում

է սերտ կապ ընտրողների և ընտրուողի մէջ. վերջինս հանդիսանում է առաջինների կամքի արտայայտիչ։

Ուղղակի ընտրութիւնները կենդանի հետաքրքրութիւն են զարթեցնում հասարակութեան մէջ։ Ստատիստիկան ցոյց է տալիս, որ ուղղակի ընտրութիւններին կրկին անդամ աւելի մարդիկ են մասնակցում, քան անուղղակի ընտրութիւններին։

Եթէ ներկայացուցիչը չարդարացնէ ընտրողների յոյսը, ապա ուրեմն վերջինները հնարաւորութիւն ունեն հետևեալ ընտրութիւնների ժամանակ չղնել նրա թեկնածութիւնը։

Միւս կողմից ակներև են անուղղակի ընտրութիւնների թերութիւնները, նրանց հակաժողովրդական տենդենցիան։

Երկաստիճան կամ ընդհանրապէս անուղղակի ընտրութիւնների ժամանակ լիազօրները կոմպրոմիս անելով յանկարծ ներկայացուցիչ կարող են ընտրել բոլորովին ուրիշ հայեացքների տէր մարդու, քան ժողովուրդը. այդպիսի ճանապարհով ընտրածը արտայայտիչ կլինէր մի խումբ մարդկանց, և ոչ բոլոր ընտրողների կամքի։

Անուղղակի ընտրութիւնները ամենից շատ վնասում են աշխատաւոր դասակարգերին։ Մի գիւղացու կամ բանուորի համար ծանր բան է լիազօր ընտրուել, տասնեակ վերստեր ճանապարհ կտրել, ծախսեր անել՝ դեպուտատ ընտրելու համար, այն ինչ այդ բանը դիւրին է բուրժուաների համար։ Բացի դրանից՝ ուղղակի ընտրութիւնների ժամանակ դժուար կարող են պատահել խարդախութիւններ և ճնշում, քան անուղղակի ընտրութիւններին։ Հաղարաւոր ընտրողների դժուար է

կաշառել, իսկ սակաւաթիւ լիազօրներից մէկին կամ մի քանիսին՝ ոչ դժուար։

Կառավարութիւնը հեշտութեամբ կարող է ճնշում գործ դնել սակաւաթիւ լիազօրների վրայ և իւր ուզած մարդկանց ընտրել տալ, իսկ ուղղակի ընտրութիւնների ժամանակ համեմատաբար շատ քիչ երկիւղ կարող է լինել այդ նկատմամբ։

Անուղղակի ձայնաւորութեամբ ընտրուածը կլինի իսկապէս ոչ թէ ընտրողների, ժողովրդի, այլ լիազօրների ներայացուցիչ։

Ուղղակի ձայնաւորութիւնը ընդունուած է Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում (բայխստագի ընտրութիւններին) և ուրիշ դեմոկրատիական երկրներում։

Ինչպէս որ մենք պահանջում ենք ուղղակի ձայնաւորութիւն, այնպէս էլ անհրաժեշտ ենք համարում գաղտնի ձայնաւորութիւնը։ Ըստ երևոյթին ոչ մի վնաս չէր լինի, նոյնիսկ շատ լաւ կլինէր, եթէ ընտրողները բացարձակ կերպով յայտնէին, թէ ում են նրանք ձայն տալիս, թէ ով է նրանց ընտրելին։ Բայց քուէարկութեան կողմնակիցները ասում են, թէ ով քաղաքացիական արիութիւն ունի, ով արժանապէս գնահատել գիտէ իւր իրաւունքները, նա պարտաւոր է նաև առանց քաշուելու կամ վախենալու տալ իւր քուէն ցանկացած մարդուն։

Սակայն այդ բոլոր խօսքերը իրականութեան հետ առընչութիւն չունեն։ Մենք գործ պիտի ունենանք ոչ թէ աբստրակտ գաղափարների հետ, այլ գործնական կեանքի հետ։ Իսկ ինչ է սովորեցնում մեզ գործնական կեանքը։ Ահա թէ ինչ։

Ասենք թէ մի ընտրողական շրջանում պէտք է ընտրել մի դեպուտատ։ Հաւաքւում են բոլոր ընտրողները՝ նրանց մէջ կան թէ բազմաթիւ բանուորներ և թէ նրանց կառավարիչները և տէրերը, թէ ատորագրեալներ և թէ ատորագրողներ. հսկում են նաև կառավարութեան մարդիկ։ Ի՞նչ դուրս կգայ բայց քուէարկութեան դէպքում։ Այն, որ հազարաւոր բանուորներ, հացի խնդրից դրդուած, ատիպուած կլինեն ձայն տալ այնպիսի մարդու, որը ոչ թէ բանուորների, այլ գործատիրոջ շահերը պիտի պաշտպանէ պարլամենտում. հէնց ինքը տէրը կդնի իւր թեկնածուին. վայը եկել տարել է այն բանուորին, որը կհամարձակուի «տիրոջ»ը ձայն չտալ, նրա կամքին հակառակ երթալ՝ հեշտութեամբ նա կարող է կորցնել իւր հացի կտորը՝ նոյնը նաև միւս ատորագրեալների վերաբերմամբ կարելի է ասել։ Իսկ որ գլխաւորն է, բայց քուէարկութեան ժամանակ արթուն կերպով հսկում են կառավարութեան գործակալները։ Մի՞թէ քչերը կլինեն, որ կառավարութիւնից վախենալով ձայն կտան նրա ուզած մարդուն։

Ո՞ւմ յայտնի չէ այն, երբ գիւղի տանուտէր են ընտրում, հարստահարուած գիւղացին ձայն՝ է տալիս էլի իրեն կեղեքող վաշխառուին, բռնակալ իշխանաւորներին։ Ինչո՞ւ. ոչ միայն նրա համար, որ տգէտ է, այլ նաև նրան համար, որ գիւղացին վախենում է նրանց վրիժառութիւնից։

Ուրեմն՝ այնպիսի մի կարևոր գործ, ինչպիսին հանդիսանում են ընտրութիւնները, չպիտի զոհ բերել ինչ որ սին «քաղաքացիական արիութեան» որից ոչ մի դրական շահ չունի աշխատաւոր ժողովուրդը։ Մի՞թէ կեղծաւորութիւն չեն անում բայց քուէարկութեան պաշտպանները։ Մի՞թէ նրանք ամեն ժամանակ և ամեն տեղ քաղաքացիական արիութիւն են ցոյց տալիս, ճշմարտու-

թիւն խօսում առանց խաբելու։ Ո՛չ, ուրիշ պատճառ ունին նրանք. իրենց դասակարգային-բուրժուական շահերը պաշտպանելու միջոցներից մէկն է բաց քուէարկութիւնը։ Ահա թէ որտեղ է գաղտնիքը։

Այդ բաներից ազատուելու համար՝ աշխատաւոր ժողովրդի շահը պահանջում է, որ քուէարկութիւնը լինի գաղտնի։ Իւրաքանչիւր ընտրող իւր խղճի ձայնին լսելով կընտրէ նրան, ում համարում է ամենից արժանաւոր։ Այս է պատճառը, որ գաղտնի քուէարկութիւն է ընդունուած եւրոպական համարեա բոլոր ազատ երկրներում։ Բաց քուէարկութիւնը հնութեան մնացորդ է և վերացնելու արժանի։

Զանազան կերպ կարելի է կատարել գաղտնի քուէարկութիւնը։ Անգլիայում այսպէս են անում՝ ընտրողական թերթերի վրայ նշանակուած են լինում բոլոր կանդիդատների անունները. իւրաքանչիւր ոք իւր ցանկացած մարդու անուան կողքին խաչ է դնում և յանձնում ընտրողական յանձնաժողովին։ Ուրիշ երկիրներում ընտրական թերթերի վրայ ոչ մի անուն էլ չի լինում գրրած, թողնում է ընտրողներին գրել ուզած անունը և թերթը յանձնաժողովին տալ։ Գերմանիայում ամեն մի կուսակցութիւն տպում է իւր առանձին բիւլետեննեը և ձայն տալիս ցանկացած մարդուն, այդ բիւլետեններն էլ հաւաքում է յանձնաժողովը և տպա համարում։ Որպէսզի անգրագէտներին էլ յարմարութիւն տրուի, կուսակցութիւնների բիւլետենները առանձին-առանձին գոյներ ունեն. օրինակ՝ լիբերալներինը դեղին է, սոցիալիստներինը՝ կարմիր, և այլն։ Անգրագէտ մարդն էլ արդէն հեշտութեամբ ջոկել կարող է իւր ընտրեալների ցանկը։

Այս է ամենայարմար ձևը գաղտնի ընտրութեան ժամանակ։ Միքանի տեղերում ընդունուած է նաև այն սիստեմը, որ իւրաքանչիւր թեկնածու ունենում է իւր տուփը. ընտրողները մօտենում են տուփերին և ցանկացած թեկնածուի տուփը գցում են սպիտակ քուէ, իսկ չցանկացածին սև քուէ։

Գաղտնի քուէարկութիւնը աւելի կատարեալ անելու համար ընտրուած կարգ է նաև հետևեալը։ Ընտրութեան վայրում լինում է մի յատուկ սենեակ, ուր մտնում է իւրաքանչիւր մի ընտրող և այնտեղ, ուր ոչ ոք նրան դիտել չէ կարող, յատուկ պատրաստուած ծրարի մէջ է դնում իւր ուզած բիւլետենը։ Այնտեղից դուրս գալով ծրարը տալիս է յանձնաժողովին։ Ոչ ոք այդպիսով չէ կարող իմանալ, թէ այս կամ այն ընտրողը ում է ձայն տուել։

Տեսնում ենք ուրեմն, որ հարկաւոր է նաև պահանջել ուղղակի եւ գաղտնի ձայնատուութիւն։

* * *

2ρ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. Ժողովրդապետութիւն

Եր. 3—10, ժողովրդապետութեան էութիւնը։—Անմիջական և ներկայացուցչական ժողովրդապետութիւն։—Ռեֆերենդում և ինիցիատիւ։— Ընտրողական իրաւունք։

II. Նախընտրական պայմաններ

Խօսքի, մամուլի և ժողովումների եր. 10—19 ազատութիւն։—Անձի և բնակարանի արձեռնմխելիութիւն,—կուսակցութիւններ։ ընտրողական շրջաններ և ընտրութիւնների կարգաւորումը։

III. Ընդհանուր ընտրողական իրաւունք

Եր. 19—43 Ընդհանուր ընտրողական իրաւունքի էութիւնը։ — Սահմանափակումներ։—Դասային ներկայացուցչութիւն կարողութեան և կրթութեան ցենզ։ -Բնակավայր։—Հասարակական միջոցներից օգտուողներ։—Զինուորականներ և չինովնիկներ։Այլացեղ և այլակրօն ընտրողներ։ Կանայք։—Ընտրողների տարիքը։—Անչափահասներ, հոգեկան հիւանդներ, յանցագործներ և օտարահպատակներ։

IV. Հաւասար եւ պրոպորցիոնալ ընտրութիւններ

Եր. 44—65 Հաւասար ընտրողական իրաւունքի էութիւնը։—Պլուրալսիստեմ։—Սրա պաշտպանները։—Պլուրալսիստեմի անհեթեթութիւնը։—Անգլիա, Բելգիա, Աւստրիա, Պրուսսիա։—Ընտրողական աշխարհագրութիւն։—Գերմանիա։—Մաժորիտար ընտրութիւններ։—Փոքրամասնութեան իրաւունքի խախտումը։—Օրինակներ։— Մաժորիտար ընտրութիւնները չեն կարող ժողովրդական ներկայացուցչութեան պատկերը տալ։—Փոքրամասնութեան ներկայացուցչութիւն։—Պրոպորցիոնալ ընտրութիւններ և նրանց էութիւնը։ Վ. դ' Օնդտի սիստեմը։ Պրոպս ընտրողական առաւելութիւնները։

V. Ուղղակի եւ գաղտնի ձայնեւորման էջ. 65

Ուղղակի ձայնաւորութեան էութիւնը։ Անուղղակի ընտրութիւնների էութիւնը։—Երկաստիճան և բազմաստիճան ընտրութիւններ։ Ուղղակի ընտրութիւնների առաւելութիւնները և անուղղակի ընտրութիւնների պակասութիւնները։— Գաղտնի ձայնաւորութիւն և նրա առաւելութիւնները և թաց քուէարկութեան թերութիւնները։—Վերջաբան։

Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԳԱ Մ. Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0206441

35.610